համարել:

53 **Կ. Ղաֆադարեան**, *Պատմահնագիտական դիտողութիւններ*.... էջ 168:

54 Նոյն տեղում, էջ 166::

55 **Կ. Կոստանեան**, *Վիմական տարեգիր*. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 72:

56 **Կ. Ղաֆադարեան**, *Պատմահնագիտական դիտողութիւններ*, էջ 171, 167:

57 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Առաջին, Վենետիկ-Ս. Ղազար, 1836, էջ 819:

58 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 153:

59 **Վարդան վարդապետ**, էջ 145, 155:

60 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 152:

61 Նոյն տեղում:

62 **Քարթլիս ցխովրեբա**, հտ. I, էջ 344:

63 **Սամուէլ Անեցի**, էջ 129:

64 **Պ. Մ. Մուրադեան**, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, Երեւան, 1977, էջ 119:

65 **Ղեւոնդ Մովսէսեան**, նշ. աշխ., էջ 75:

66 **Վարդան վարդապետ**, էջ 101:

67 **Ս. Ա. Աւագեան**, *Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն*, Երեւան, 1978, էջ 319, 322:

68 **Ստեփաննոս Օրբէլեան**, էջ 355:

69 Վերցնում ենք մեր հաւաքածոյից:

70 Ժամանակին այս արձանագրութիւնների նախնական հետազօտմամբ կարծիք էինք յայտնել (**Ա. Ի. Շահնազարեան**, *Վահրամեանների իշխանութիւնը*, Երեւան, 1990, էջ 89), որ ի դէմս դրանցից մէկում յիշատակուած Բորինայի, գործ ունենք Կիւրիկէ Բ-ի դստեր հետ, սակայն այժմ դժուարանում ենք դա պնդել: Ի դէպ, Կ. Ղաֆադարեանն այդ արձանագրութեան հետ կապուած, առանց աղբիւր վկայակոչելու, գրում է, որ Աղսարթանի որդի Կիւրիկէն մինչեւ այժմ յայտնի է միայն 1232 թուի մի արձանագրութեամբ եւ Կիրակոս Գանձակեցու մի վկայութեամբ (նոյն տեղում): Ուրեմն, Կիւրիկէն արդէն 1232 թ. հօրը փոխարինած է եղել:

71 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 153:

72 Նոյն տեղում, էջ 154:

73 Նոյն տեղում, էջ 243, **Վարդան վարդապետ**, էջ 145:

74 **Կարո Ղաֆադարեան**, *Պատմահնագիտական դիտողութիւններ*..., էջ 175:

75 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 99:

76 **Գրիգոր Ակներցի**, էջ 42-43:

77 **Կ. Ղաֆադարեան**, *Հաղբատ*, էջ 177:

78 **Կ. Ղաֆադարեան**, *Պատմահնագիտական դիտողութիւններ*..., էջ 171:

79 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 153:

80 **Վարդան վարդապետ**, էջ 153-155:

81 **Մակար Բարխուտարեանց**, նշ. աշխ., էջ 141, **Կ. Ղաֆադարեան**, *Պատմահնագիտական դիտողութիւններ*..., էջ 169, **Գ. Սարգսեան**, *Անապատ կամ Նոր Վարագ վանքը եւ նրա վիմագրութիւնը*.- «Էջմիածին», 1952, թիւ 11-12, էջ 28:

82 **Կ. Ղաֆադարեան**, *Պատմագիտական դիտողութիւններ*..., էջ 169:

83 **Ս. Ա. Աւագեան**, նշ. աշխ., էջ 91-93:

84 **Կ. Ղաֆադարեան**, *Պատմագիտական դիտողութիւններ*..., էջ 172, **Կարապետ Կոստանեանց**, նշ. աշխ., էջ 72:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԺԹ. ԴԱՐԱՎԵՐՋԻ - Ի. ԴԱՐԱՍԿԶԲԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Վարուժան Պողոսեան

Հայոց ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում մեծ աւանդ են ներդրել ֆրանսիացի պատմաբանները, որոնք աւելի քան մէկ դար եղեռնի պատմագրութիւնը հարստացրել են արժէքաւոր ուսումնասիրութիւններով: Դեռեւս ԺԹ. դարի 90-ական թթ. կէսերին սկզբնաւորուած՝ ցեղասպանութեան ֆրանսիական պատմագրութիւնն աւելի քան հարիւր տարի մեծապէս օժանդակել է այս իրադարձութեան պատմութեան համակողմանի ուսումնասիրութեանը, ինչպէս նաեւ իր նպաստն է բերել սկզբնաղբիւրների հրատարակութեան գործին[1]*: Անշուշտ, այս ասպարէզում պատմագիտական մտքի զարգացումը Ֆրանսիայում հարթ չի ընթացել: Ֆրանսիացի պատմաբանների առաջին իսկ աշխատութիւններում արտացոլուել են Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ասպարէզում հետագայում սուր տարակարծութիւնների տեղիք տուած՝ եղեռնի պատմութեան մեկնաբանման հիմնական միտումները՝ սկսած դրա հաւաստումից մինչ պատմական արժանահաւատութեան ժխտումը:*

Խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում արեւելեան երկրներում եւրոպական պետութիւնների գաղութատիրական քաղաքականութեան ակտիւացման հետեւանքով Ֆրանսիայում աճում է հետաքրքրութիւնն Արեւելեան հարցի եւ իբրեւ դրա բաղկացուցիչ մաս՝ Հայկական հարցի պատմութեան նկատմամբ: Ուստի՝ ԺԹ. դարի 90-ական թուականներին Ֆրանսիայում լոյս են տեսնում համիդեան կոտորածների պատմութեանը նուիրուած զանազան բնոյթի՝ պատմագիտական նշանակութեան առումով ոչ համարժէք ուսումնասիրութիւններ, որոնց հեղինակները բողոքի ձայն են վերհանում Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցող արեւմտահայութեան բնաջնջման կապակցութեամբ, խստագոյնս խարազանում թրքական կառավարութեան կողմից հայ ժողովրդի դէմ պետական մակարդակով իրականացուող ցեղասպանութեան քաղաքականութիւնը:

Առ այսօր, սակայն, ԺԹ. դարավերջի – Ի. դարասկզբի ֆրանսիական պատմագրութեան թէ՛ նուաճումները եւ թէ՛ ելեւէջները պատմաբանների կողմից քննութեան առարկայ չեն դարձել[2]*: Սոյն յօդուածում կ՚անդրադառնանք Հայոց ցեղասպանութեան առաջին փուլի՝ համիդեան կոտորածների պատմութեան լուսաբանմանը նուիրուած՝ իրադարձութիւնների ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների աշխատութիւնների քննական վերլուծութեանը, որոնք հրատարակուել են իրադարձութիւնների արշալոյսից ի վեր մինչ երիտթրքական յեղափոխութիւնը*[3]*:*

Քանի որ մեր կողմից քննարկուող ուսումնասիրութիւնների մի մասը գրուել է Օսմանեան կայսրութեան տարբեր նահանգներ կատարած այցելութիւնների ընթացքում՝ հեղինակների ստացած տպաւորութիւնների հիման վրայ, դրանք, ըստ այդմ, ձեռք են բերում նաեւ սկզբնաղբիւրի նշանակութիւն: Նման բնոյթի ուսումնասիրութիւնների թւում առաւել արժէքաւոր է յայտնի հրապարակախօս

© National Library of Armenia

Վիկտոր Բերարի (1864-1931) «Սուլթանի քաղաքականութիւնը» խորագիրը կրող գիրքը, որտեղ հեղինակն անկողմնակալօրէն ներկայացնում է Օսմանեան կայսրութիւնում բնակուող քրիստոնեայ ժողովուրդների եւ առաջին հերթին հայերի վիճակն իր ողջ բազմերանգութեամբ, վերլուծում արեւմտահայութեան հանդէպ Աբդուլ Համիդի կիրառած քաղաքականութեան ելեւէջները, բացայայտում ցեղասպանութեան՝ իբրեւ պետական քաղաքականութեան մակարդակով իրականացուող եղելութեան բնոյթը, խիստ քննադատութեան ենթարկում ֆրանսիական կառավարութեան անկարեկից դիրքորոշումը[4]:

Ինչպէս Բերարը, Լիւդովիկոս դը Կոնտենսոնը եւս Հայոց ցեղասպանութեանն առնչուող զանազան դրուագներ քննարկում է ելնելով Արեւմտեան Հայաստանում ստացած անձնական տպաւորութիւններից, իր պատումը շարադրում «Արեւելք կատարած ճանապարհորդութիւնների ընթացքում գրի առած նոթերի հիման վրայ»[5]: Ցեղասպանութեանն ընդհանուր բնոյթի գնահատականներ տալուց զատ, նա խօսքը կենտրոնացնում է նաեւ իր այցելած բնակավայրերում (Ուրֆա, Մարաշ, Այնթապ եւ այլն) տեղի ունեցած իրադարձութիւնների վրայ:

Արեւմտահայութեան բնաջնջումը, ըստ Կոնտենսոնի, իրականացուել է Կարմիր սուլթանի նախաձեռնութեամբ, որին անուանում է «մեծ մարդասպան»[6]: Նրա համոզմամբ ճգնաժամի դրսեւորման եղանակները կախուած են եղել «քաղաքական եւ կրօնական տեսանկիւններից ամէնազօր միապետից՝ սուլթան Աբդուլ Համիդից, որը կարող էր շրջանցել սպանութիւնները»[7]: Ցեղասպանութեան «միակ պատասխանատուներ» նա համարում է Օսմանեան կառավարութեանն ու ղեկավար շրջաններին, որոնց «գործելու կարգախօս տրուել էր վերից»[8]: Ինչ վերաբերում է կատարածուներին, Կոնտենսոնը մատնանշում է «հրամանի հիման վրայ գործած» զինուորների եւ նրանց աջակցած մահմեդական բնակչութեան դերը, որոնք «ջանում էին օգտուել սուլթանի կողմից տրուած՝ հայերին սպանելու թոյլտուութիւնից, ինչպէս նաեւ հետապնդում էին աւարի իրենց բաժինը յափշտակելու նպատակ»[9]: Ըստ այդմ՝ նա չի շրջանցում նաեւ մահմեդականների մոլեռանդութեան հանգամանքի էական նշանակութիւնը: Բիրեջիկում տեղի ունեցած կոտորածների առիթով, օրինակ, նա նշում է, որ գրիգորեան, կաթոլիկ եւ բողոքական հայերի համատարած բնաջնջումն իրականացուում էր մոլլաների առաջնորդութեամբ գործող մահմեդական բնակչութեան կողմից:

Կոնտենսոնի շարադրանքը պարզորոշ վկայում է, որ նա, ինչպէս եւ ֆրանսիացի ժամանակակիցներից շատերը, դեռեւս ի վիճակի չի եղել ամբողջ խորութեամբ ըմբռնել Հայոց ցեղասպանութեան բուն շարժառիթը եւ այն պատճառաբանել սուլթանի՝ Հայկական հարցին «լուծում» տալու մտադրութեամբ: Այդուհանդերձ, նա ուղղակի կապ է արձանագրում սուլթանի պանիսլամական գաղափարների եւ ԺԹ. դարի 90-ական թուականներին կրկին կեանքի կոչուած զանգուածային կոտորածների միջեւ, որոնց իրականացումը դիտում է իբրեւ արեւելեան բռնակալութեանը բնորոշ հնամենի գործելամիջոց[10]: «Աբդուլ Համիդը,– գրում է նա,– մնացել է նախ եւ առաջ՝ արեւելեան բռնակալ», իսկ Արեւելքում «պարբերաբար տեղի ունեցող արիւնահեղութիւնները, կոտորածը դիտուում են իբրեւ կառավարման միջոց, որին դիմում

են, որպէսզի գահակալի իշխանութեան հետ հաշուի նստեն»[11]:

Կոնտենսոնը քննարկում է դեռեւս իր ժամանակակիցների կողմից շահարկուող՝ Համիդեան կոտորածների մեկնաբանութեանն առնչուող մի շարք էական խնդիրներ, օրինակ, Օսմանեան կայսրութիւնում բնակուող հայերի թուաքանակի հարցը, որը նրա տարբեր ժամանակակիցների կողմից նուազեցուում էր, քանզի վերջիններս յենւում էին գլխաւորապէս Վ. Քինէի անստոյգ տեղեկութիւնների վրայ[12]: Վկայակոչելով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տուեալները, նա հակահարուած է տալիս այս թիւը տեսակէտի կողմնակիցներին, հաւաստում, որ ԺԹ. դարավերջին հայ ազգաբնակչութեան թիւը կայսրութեան տարածքում հասնում էր շուրջ երկու միլիոնի[13]:

Կոնտենսոնի ուշադրութիւնից չի վրիպել նաեւ ցեղասպանութեան գործընթացում հայերի ունեցած կարծեցեալ «պատասխանատուութեան» հանգամանքը: «Տեղում իրադարձութիւններն ուսումնասիրելուց յետոյ,– գրում է նա,– ես հարց եմ տալիս, թէ ի՞նչն է աւելի յարուցելու մեր զարմանքը՝ մի ողջ ազգի բնաջնջմանը վերաբերող հրամանն արձակած սուլթանի արիւնալի բարբարոսութիւնը, թէ այդ դժբախտների անխոհեմութիւնը, որոնք չունենալով Եւրոպայի յուսալի աջակցութիւնը, մի պահ հաւատ են ընծայել իրենց գործի յաջողութեանը»: Նա միանգամայն օրինաչափ է համարում «չլսուած եւ չտեսնուած չափերի հասնող» թրքական կեղեքմանը դիմադրելու հայերի իրաւունքը: «Ինձ հետ կը համաձայնուեն,– շարունակում է նա,– որ դա նրանց իրաւասութիւնների մէջ է մտնում եւ այս հարցում Ֆրանսիայում որեւէ մէկին համոզելու հարկը չկայ: Բայց ինչ կարող էին նրանք անել միայնակ եւ արդե՞օք յուսալքման այդ սահմանեզրին չէին հասել այն պահին, երբ դադարել էին խորհելուց»[14]: Ակնյայտ է, որ առաջադրուած հարցին յստակ պատասխան չտալով հանդերձ, նրա համակրանքներն, այդուհանդերձ, անասելի տառապանքներ կրող հայ ժողովրդի, այլ ոչ թէ նրա դահիճների կողմում են:

Թէպէտ Կոնտենսոնը բացայայտօրէն չի քննադատում եւրոպական պետութիւնների՝ հայկական կոտորածների հարցում դրսեւորած անկարեկից վերաբերմունքը, նրա շարադրանքում, այնուամենայնիւ, թռուցիկ ձեւով արտացոլուել են մեծ տէրութիւնների քաղաքականութեան նկատմամբ քամահրական ակնարկներ: Վիլհելմ Բ.-ին, օրինակ, նա բացայայտօրէն անուանում է Աբդուլ Համիդի բարեկամ[15]:

Կոնտենսոնի հպանցիկ, գուցէ եւ ոչ միշտ սպառիչ, սակայն, անաչառ դիտարկումներն առաւել մեծ արժէք են ստանում, եթէ նկատի ունենանք, որ հեղինակը ֆրանսիացի եզակի մտաւորականներից է, որը եղել է իրադարձութիւնների ականատեսը:

Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը մանրազնին քննութեան առարկայ է դարձրել Ռ. Բարիդոնը, որը յենուելով հայ ականատեսների վկայութիւնների, ինչպէս նաեւ անգլիացի քաղաքական գործիչների (Գլադստոն, Դիլոն եւ ուրիշներ) ելոյթների վրայ, վերհանել է Համիդեան կոտորածների համառօտ, սակայն հաւաստի պատկերը եւ խիստ քննադատութեան ենթարկել եւրոպական պետութիւնների վարած քաղաքականութիւնը[16]:

Բարիդոնն իրաւամբ կանգ է առնում

© National Library of Armenia

ԺԹ. դարի երկրորդ կէսերին Օսմանեան կայսրութիւնում հայերի համար ստեղծուած անելանելի կացութեան վրայ. «Նոյնիսկ այդ պահին, որը նրանց (հայերի – Վ.Պ.) պատմութեան լաւագոյն ժամանակաշրջաններից էր, նրանց վիճակը նոյնքան վատթար էր, որքան Ամերիկայի ստրուկներինը՝ Քաղաքացիական պատերազմից առաջ... Նրանք երբեէ չեն ունեցել ո՛չ փոքր իսկ անկախութիւն եւ ո՛չ·էլ նոյնիսկ իրենց կանանց ու երեխաներին պաշտպանելու իրաւունք»[17]:

Վերլուծելով Բեռլինի վեհաժողովից յետոյ մեծ տէրութիւնների եւ Օսմանեան կայսրութեան միջեւ ձեւաւորուած փոխյարաբերութիւնները, Բարիդոնն առաջադրում է Արեւմտեան Հայաստանի շուրջ առկայ քաղաքական իրավիճակի ինքնատիպ եւ միանգամայն ընդունելի մեկնաբանութիւններ: Ըստ նրա, ստեղծուած պայմաններում, Բարձր Դուռը գիտակցում էր, որ իր՝ իբրեւ պետութեան գոյատեւման անհրաժեշտութիւնը թելադրւում էր մեծ տէրութիւնների միջեւ հաւասարակշռութիւնը պահպանելու անհրաժեշտութեամբ: Հէնց այդ պատճառով, ինչպէս նա նշում է, «սուլթանը համարձակութիւն է ունեցել առաջին իսկ պահից խախտել իր բոլոր խոստումները եւ Բեռլինի պայմանագրի յաջորդ օրուանից ի վեր կեանքի է կոչել քրիստոնեայ հպատակներին ոչնչացնելու համակարգը»[18]:

Բարիդոնն անդրադառնում է Համիդիէ զօրամիաւորումների կազմաւորման ուղղութեամբ Աբդուլ Համիդի գործադրած ջանքերին, վերջիններիս յանցանքներին, ինչպէս նաեւ 1895 թ. մայիսին՝ հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման պահանջով հանդէս եկած մեծ տէրութիւնների դեսպանների միջամտութեան հետեւանքով տեղի ունեցած հայկական ջարդերին: «Ծրագիրը, որով առաջնորդւում էին,– նշում է .նա,– յանգում էր մեծ թուով մարդկանց սպանութեանը, որպէսզի անզօր դարձնէին տեղի քրիստոնեաներին, ապրողներից յափշտակէին գոյութեան իւրաքանչիւր միջոց, այնուհետեւ՝ սովամահութեան դատապարտէին կամ սպանէին նրանց, ովքեր կը հրաժարուէին գրկաբաց ընդունել իսլամը»[19]:

Այս հարցը կարիք ունի առաւել հանգամանալից քննութեան, քանզի Հայոց ցեղասպանութեան մեկնաբանութեան ասպարէզում Բարիդոնի հայեացքների ողջ համակարգը խարսխուած է դրա վրայ: Հեղինակն, անտարակոյս, նկարագրում է հայկական նահանգներում եւ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտորածների մանրամասները, որոնք, սակայն, պայմանաւորում է սոսկ կրօնական առճակատման հանգամանքով եւ քննարկում իշխանութիւնների կողմից՝ կայսրութեան տարածքում բնակուող քրիստոնեայ այլ ժողովուրդների նկատմամբ դրսեւորուող վերաբերմունքի ընդհանուր յենքի վրայ: Նշենք, որ հայերից զատ օսմանեան լծի ներքոյ հեծում էին քրիստոնեայ շատ այլ ժողովուրդներ եւս, որոնց նկատմամբ օսմանեան տարբեր վարչակարգեր պարբերաբար կիրառում էին բնաջնջման միեւնոյն քաղաքականութիւնը: Նման հարցադրումը ողջունելի է, իսկ այդ առիթով տարակարծութիւններ տածելն իսկ անիմաստ է: Սակայն ուշադրութիւնը կենտրոնացնելով միմիայն՝ Հայոց ցեղասպանութեան իրականացման ընթացքում, յիրաւի, իր էական դերն ունեցած կրօնական դաւանանքների զանազանութեան հանգամանքի վրայ, որը ժխտելն անհնար է, իսկ անտեսելն անթոյլատրելի եւ, փաստօրէն, այն ներկայացնելով իբրեւ կոտորածների միակ պատճառ[20], հեղինակն ամբողջութեամբ շրջանցում է այն առանձնայատկութիւնները, որոնք, արեւմտահայութեան բնաջնջման պարագայում, բնորոշ էին Բարձր Դռան կողմից կիրառուող օսմանեան պետական քաղաքականութեանը եւ Հայոց ցեղասպանութիւնն ակնյայտօրէն զանազանում էին քրիստոնեայ այլ ժողովուրդների նկատմամբ գործադրուած զանգուածային բռնութիւններից:

Յայտարարում՝ Հայոց ցեղասպանութիւնը Բարիդոնը մեկնաբանում է իբրեւ զուտ կրօնական հողի վրայ խարսխուած իրադարձութիւն եւ բացարձակապէս չի հիմնաւորում դրա բուն դրդապատճառը: Նրա տեսադաշտից, այսպիսով, ամբողջութեամբ դուրս է մնում Հայկական հարցին «լուծում» տալու՝ սուլթանի որդեգրած իւրօրինակ տարբերակը, որի հեռահար նպատակը ոչ միայն հեղինակի կողմից բազմիցս իրաւամբ շեշտուող՝ կայսրութեան տարածքում բնակուող քրիստոնեաների, այդ թւում հայերի, ոչնչացումն էր, այլեւ բռնագրաւուած հայկական պատմական տարածքների հայաթափումն ու դիւանագիտութեան քառուղիները մխրճուած Հայկական հարցից մէկընդմիշտ ձերբազատումը:

Նահատակուող հայութեանն օգնութեան հասնելու միակ ճանապարհը հեղինակը տեսնում է ի դէմս Եւրոպայում հասարակական կարծիքի աշխուժացման, որը եւ կը հարկադրէր, ըստ նրա, մեծ տէրութիւնների կառավարութիւններին լրջօրէն զբաղուել «մարդասիրական այս գործով»[21]:

Իրադարձութիւնների թարմ տպաւորութեան ներքոյ է գրուել Գ. Ապպիայի՝ Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերում տեղի ունեցած կոտորածների պատմութեանը նուիրուած գրքոյկը[22]: Հեղինակը սահմանափակւում է հպանցիկ դիտարկումներով, թռուցիկ հայեացք նետում մի շարք վայրերում (Կեսարիա, Վան, Զէյթուն) տեղի ունեցած անցքերին: Համառօտակի ուրուագծելով 1895 թ. հոկտեմբերի 28-ից ի վեր Ուրֆայում տեղի ունեցած կոտորածների ընդհանուր պատկերը, Ապպիան նշում է թէ՛ համիդիէ զօրամիաւորումների եւ թէ՛ անկանոն քրդական հրոսակախմբերի մասնակցութիւնը հայերի ոչնչացման գործընթացին, հաւաստում «բազում հարիւրաւոր» մարդկանց բնաջնջման փաստը, 1500 կրպակների կողոպուտը, բազմաթիւ քրիստոնեաների՝ բռնի կրօնափոխութեան իրողութիւնը[23]:

Թէեւ հեղինակը մատնանշում է մահմեդականների մոլեռանդութեան նշանակութիւնը, փաստեր բերում առ այն, թէ ինչպէս են զանազան վայրերում բնակուող մահմեդականները յանդիմանել Ուրֆայի հաւատակիցներին հայերի հանդէպ «մեղմ» վերաբերմունք ցուցաբերելու համար[24], այդուհանդերձ, ուշադրութիւնը կենտրոնացնում է հայկական կոտորածների՝ ծրագրաւորուած բնոյթի վրայ: Նա ընդգծում է, մասնաւորապէս, տեղական իշխանութիւնների թողտուութեան հանգամանքը, որոնք ոչինչ չեն արել յանցագործներին պատժելու համար եւ մահմեդական խաժամուժին թոյլատրել են կողոպտել հայերի ունեցուածքը:

Ցաւով արձանագրելով, որ հոկտեմբերին տեղի ունեցած իրադարձութիւններն ազդարարել են սոսկ շատ աւելի լայնածաւալ կոտորածների սկզբնաւորումը, նա համառօտակի անդրադառնում է դեկտեմբերի վերջերին տեղի ունեցած հայկական ջարդերի նախապատրաստական աշխատանքներին. «Թրքական արդարադատութեան պաշտօնական ներկայացուցիչները՝ քաղաքի բարձրաստիճան

© National Library of Armenia

ղեկավարներից մէկի՝ ոմն Հուսէին փաշայի գլխաւորութեամբ,– նշում է նա,– նիստ են գումարել եւ վճռել, որ բոլոր քրիստոնեաներին զինաթափելուց յետոյ յարձակում կը գործեն նրանց վրայ Սուրբ Ծննդի յաջորդ օրը՝ 1895 թ. դեկտեմբերի 27-ին»[25]: Ապպիան իրաւամբ բացայայտում է նաեւ թուրք ջարդարարների պարագլուխների որդեգրած նենգ գործելամիջոցները, որոնք կոտորածների պատասխանատուութիւնը հայերի վրայ բարդելու նպատակով կեղծ կրակոց են կազմակերպել թրքական զօրքերի հրամանատարի վրայ, որը եւ դարձել է կոտորածի շարժառիթը[26]: Ընդհանուր առմամբ, Ապպիան հաւաստում է, որ միեւնոյն փաստերն են արձանագրուել երկրի ողջ տարածքում, որոնց հետեւանքով զոհուել է 100000 հայ, իսկ տասնեակ հազարաւորներ՝ հարկադրաբար ուրացել են իրենց հաւատը[27]:

Ինչպէս տեսնում ենք, Ապպիայի պատումը վկայում է, որ հեղինակն ի վիճակի չի եղել բացայայտելու ցեղասպանութեան բուն շարժառիթները: Այդուհանդերձ, այն իր նպաստն է բերել հայկական կոտորածների մասին, գուցէեւ ոչ լիարժէք, պատկերացումների ձեւաւորման գործին:

Խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանութեան մեկնաբանութեան ասպարէզում մեծ հետաքրքրութիւն է դրսեւորել «Ռեւիւ դէ ռեւիւ» հանդէսի տնօրէն Ժան Ֆինոն, որն առաջիններից է Ֆրանսիայում լուսաբանել Համիդեան կոտորածների հաւաստի պատկերը եւ ֆրանսիական հանրութեանը ստոյգ տեղեկատուութիւն հաղորդելու նպատակով հրապարակել է անգլիացի հասարակական եւ կրօնական գործիչ, Հայ դատին նուիրուած բազմաթիւ ուսումնասիրութիւնների հեղինակ Մաքոլ Մալքոլմի «Հայաստանը Եւրոպայի առջեւ» աշխատութիւնը[28]: Դրան. կից ընդարձակ յօդուածում Ֆինոն շօշափում է Օսմանեան կայսրութիւնում արեւմտահայութեան բնաջնջմանն առնչուող որոշ հարցեր[29]:

Յենուելով, իր իսկ հաւաստմամբ, ամէն օր ստացուող նորանոր փաստերի վրայ, Ֆինոն ցեղասպանութիւնը մեկնաբանում է իբրեւ օսմանեան կառավարութեան կողմից պետական մակարդակով իրականացուող իրադարձութիւն: «Մի ողջ քրիստոնեայ եւ քաղաքակիրթ, խաղաղասէր ու խելացի ժողովուրդ,– գրում է նա,– որն ունի փառապանծ պատմական անցեալ, իսկ ներկայումս հարուստ գրականութիւն, անհետանում է մարդասպանների դանակների հարուածներից, որոնց բացայայտօրէն հովանաւորում է նոյնքան բարբարոսական, որքան եւ դաժան կառավարութիւնը»[30]: Ցեղասպանութեան գործընթացում նա արձանագրում է միայն մէկ՝ կոտորածների մոլեգնութեան աճին առնչուող փոփոխութիւն, որը «ժամանակ առ ժամանակ կրկնապատկւում է»: Նուրբ երգիծանքով նա նշում է, որ օսմանեան կառավարութիւնը խոյս է տալիս քաղաքակիրթ երկրին բնորոշ «տարրական պարտաւորութիւններից», սակայն, փոխարէնը՝ կառչում է իր բոլոր իրաւունքներից եւ դիմում «ժողովուրդների իրաւունքին», որպէսզի կոտորածները շարունակելու թոյլտուութիւն ստանայ[31]:

Սասունի ջարդերն անուանելով «սարսափելի», Ֆինոն նկատում է, որ դրանք «զարհուրանքով են համակել իրենց իսկ թուրքերին»[32]: Նա հիմնաւորապէս բացայայտում է համիդեան վարչակարգի էութիւնը, որը ոչ միայն չի խորշել կոտորածներից, կողոպուտից, գիւղերի ամայացումից, հազարաւոր ընտանիքներ սնանկացնելուց, այլեւ չի քողարկել իր «անզօրութիւնը կարգ ու. կանոնը պահպանելու հարցում»: «Ընդհանուր առմամբ, մենք մասնակցում ենք,– եզրակացնում է նա,– հրէշաւոր ներկայացման՝ ընդհանուր իրաւունքների նկատմամբ գործադրուող ոճիրների թագադրութեանն ու մեծարմանը, որոնք պայմանաւորուած են եւրոպական պետութիւնների կողմից ճանաչուած կառավարութեան դիրքորոշմամբ»[33]: Ի դէպ, Ֆինոն ֆրանսիացի եզակի պատմաբաններից է, որը հարեւանցիօրէն ակնարկում է պատմական Հայաստանի ռազմակալման փաստը, հեգնանքով նշում, որ թրքական կառավարութիւնը կոտորածն իրականացնում էր «իր (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.) տարածքներում»[34]:

Ֆինոն մանրամասն քննարկում է եւրոպական պետութիւնների դիրքորոշումը, եւ Հայկական հարցի հանդէպ նրանց ի յայտ բերած անտարբերութիւնը պատճառաբանում Օսմանեան կայսրութեան գործերին միջամտելու ցանկութեան բացակայութեամբ, հանգամանք, որը կարող էր «Եւրոպայի չորս անկիւններում հրդեհ բռնկել»[35]: Նա հիմնաւորապէս հերքում է հայերի վրայ բարդուող անհիմն մեղադրանքները, ըստ որոնց՝ վերջիններիս անկախութիւն ձեռք բերելու ձգտումները մեծ դժուարութիւններ են յարուցել եւրոպական դիւանագիտութեան համար: Ֆինոն զուգահեռներ է անցկացնում արեւելահայերի եւ արեւմտահայերի կացութեան միջեւ, ըստ այդմ՝ վկայակոչում Արեւմտեան Հայաստանում բնակուող հայերի անապահովութեանն առնչուող բազմապիսի փաստեր եւ հիմնաւորում օսմանեան վարչակարգից արեւմտահայութեան դժգոհութեան օրինաչափութիւնը: Հայաստանի անկախութեան հռչակման խնդրի շահարկման կապակցութեամբ նա տալիս է հետեւեալ իրատեսական մեկնաբանութիւնը. «Խօսքը վերաբերում է այդ դժբախտ բնակիչների կեանքին եւ ունեցուածքին, այլ ոչ թէ քաղաքական երազանքների»[36]:

Ազատագրական շարժման զարթօնքն Արեւմտեան Հայաստանում Ֆինոն պայմանաւորում է մեծ տէրութիւնների «անյողդողդութեամբ» եւ նշում; որ անհաւասար պայքարում մահ փնտրող հայ երիտասարդութիւնը յոյս էր տածում իր «հերոսական վախճանի միջոցով Եւրոպային դուրս բերել խոր ընդարմացումից»[37]: Նա քննադատական խօսքեր է ուղղում ֆրանսիական դիւանագիտութեան հասցէին, որը «դժբախտութիւն է ունեցել իր հովանու ներքոյ վերցնելու Թուրքիային» եւ միաժամանակ ֆրանսիացիներին յիշեցնում է հայ ժողովրդին օգնութեան ձեռք մեկնելու պարտքի զգացողութեան մասին[38]:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ «Ռեւիւ դէ ռեւիւում» տպագրուած՝ Աբդուլ Համիդին եւ նրա մերձաւորներին նուիրուած անստորագիր մի յօդուած, ուր տրուած է սուլթանի գործունէութեան համառօտ գնահատականը[39]: Անանուն հեղինակն ուրուագծում է նրա անկողմնակալ դիմագիծը, անուանում նրան «արիւնարբու հրէշ»[40], որը հետամուտ է մահմեդական կայսրութեան վերակազմաւորմանն այն հիմունքներով, որոնք առաջադրել է Օմար խալիֆը[41]: Իսկ նման կայսրութեան շրջանակներում կարող են գոյութիւն ունենալ մարդկանց երկու խմբաւորումներ՝ հաւատացեալներ եւ նրանց ծառայող ռայեան: Աբդուլ Համիդը, ըստ հեղինակի, ձգտում էր իր քաղաքական վարքագիծը համատեղել իսլամի պատմութեան առաջին դրուագների հետ եւ ըստ այդմ՝ իրականացնում էր «հայկական կոտորած-

© National Library of Armenia

ներ եւ թուրքերի արտաքսումներ»[42]: Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, 300000 հայերի բնաջնջումը հեղինակը դիտում է սոսկ իբրեւ Օսմանեան կայսրութիւնում տիրող խառնաշփոթ իրավիճակի ընդհանուր շղթայի բաղկացուցիչ օղակ: Այդուհանդերձ, ըստ նրա հաւաստման, հայկական կոտորածների հետեւանքով կայսրութիւնում «անկում են ապրել առեւտուրը, արդիւնաբերութիւնը, գիւղատնտեսութիւնը»[43]: Հեղինակը մերթ ընդ մերթ քննադատական խօսքեր է ուղղում եւրոպական տէրութիւնների հասցէին, որոնք սուլթանին թոյլատրել են «իր գաղափարները վերածել քաղաքական գործողութիւնների»[44]:

Խնդրոյ առարկայ ժամանակահատուածում ֆրանսիացի պատմաբանների մի մասը Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանութեան պատմութեան լուսաբանմանն անդրադարձել է նաեւ Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեանը եւ Արեւելեան հարցի պատմութեանը նուիրուած ընդհանուր բնոյթի աշխատութիւններում: Դրանցից առաւել կարեւոր է ֆրանսիացի նշանաւոր պատմաբան, անուանի նապոլէոնագէտ, Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեան խոշոր գիտակ Էդուարդ Դրիոյի (1864-1947)[45] արեւելեան հարցի պատմութեանը նուիրուած գիրքը[46], ուր նա մանրամասնօրէն քննարկում է համիդեան կոտորածների պատմութիւնը:

Համառօտակի կանգ առնելով հայկական տարածքների մասնատման եւ ԺԹ. դարի 70-ական թթ. Հայկական հարցի ծագման վրայ, նա հանգամանալից ներկայացնում է Օսմանեան կայսրութեան տարածքում բնակուող հայերի կացութիւնը 80-90-ական թուականներին, բազմիցս ընդգծում՝ Աբդուլ Համիդի քաղաքականութեան՝ Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրով ստանձնած պարտաւորութիւններին անյարիր միտուածութիւնը եւ բարենորոգումների իրականացման հարցում արեւմտեան տէրութիւնների գործադրած ջանքերի անարդիւնաւետութիւնը: «Անցել են ամիսներ, տարիներ,– գրում է նա,– իսկ ո՛չ մի բարենորոգում չի կենսագործուել. հարկերը գանձուել են աւելի կամայականօրէն, քրդերը դարձել են աւելի ձեռնարէց ու գիշատիչ, քան երբեւէ, կառավարութիւնը նրանց ընձեռել է գործելու հնարաւորութիւն, դեռ աւելին՝ քաջալերել է»:

Դրիոն իրադարձութիւնների եզակի ժամանակակիցներից է, որի հայեացքը թափանցել է համիդեան վարչակարգի քաղաքականութեան առէջքների մէջ, քանզի նրա ելակէտային դրոյթը յանգում է այն բանին, որ սուլթանը վճռել էր «Հայկական հարցին լուծում տալ հայերին ոչնչացնելու միջոցով»[47]: Նշելով 1892-1893 թթ. կրօնափոխութեան եւ հայերին վտարելու ուղղութեամբ սուլթանի գործադրած ջանքերի մասին, Դրիոն՝ յենուելով «Դեղին գրքում» զետեղուած փաստաթղթերի վրայ, մանրամասնօրէն նկարագրում է 1894-1895 թթ. կոտորածների ընթացքը, խօսքը կենտրոնացնում, մասնաւորապէս, 1894 թ. Սասունի իրադարձութիւնների, 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ողբերգական անցքերի, ինչպէս նաեւ նոյեմբեր-դեկտեմբերին՝ «համաձայն Կոստանդնուպոլսից տեղ հասած հրամանների»[48]՝ Արեւմտեան Հայաստանի տարբեր գաւառներում ու քաղաքներում (Դիարբեքիր, Մուշ, Կեսարիա, Մալաթիա եւ այլն) իրականացուած կոտորածների վրայ:

Դրիոյի ուշադրութիւնից չի վրիպում, անշուշտ, հայկական կուսակցութիւնների գործունէութեան հանգամանքը: Ըստ նրա մեկնաբանութեան՝ թէ՛ եւրոպական տէրութիւնների անարդիւնաւէտ քաղաքականութիւնից եւ թէ՛ Ռուսաստանի կողմից իրենց նկատմամբ դրսեւորուող անբարեացակամ վերաբերմունքից վհատուած հայերը (հեղինակը անհերքելի փաստերով հիմնաւորում է Ալեքսանդր Գ.-ի քաղաքականութեան հայահալած բնոյթը), տուրք են տուել յեղափոխական գործունէութեան եւ հետապնդել միայն մէկ նպատակ, այն է՝ հարկադրել «տէրութիւններին եւ սուլթանին վերյիշել Բեռլինի պայմանագրի 61-րդ յօդուածի գոյութեան մասին... Անձամբ սուլթանի կողմից վարուող քաղաքականութիւնը, հայկական կոմիտէների գործունէութիւնը, եւրոպական տէրութիւնների անտարբերութիւնը կամ չկամութիւնը,– եզրակացնում է նա,– Հայաստանը նետել են սարսափելի ողբերգութիւնների գիրկը»[49]:

Եւրոպական պետութիւնների անկարեկից դիրքորոշման առիթով Դրիոն թէեւ ձեռնպահ է մնում նրանց հասցէին քննադատական խօսքեր ուղղելուց, այդուհանդերձ, իր տարակուսանքն է յայտնում առ այն, թէ «ինչպէս է Եւրոպան թոյլատրել նման ոճրի իրականացումը, որը պատմութեան մէջ, միջնադարից ի վեր, համանմանը չունի»[50]: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի քաղաքականութեանը, ապա նա գտնում է, որ ֆրանսիական կառավարութիւնը 1896 թ. Նիկոլայ Բ.-ի Փարիզ կատարած այցից յետոյ է որդեգրել Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման սկզբունքը, որը վերածել է «ժամանակակից եւրոպական իրաւունքի հիմնաքարերից մէկի եւ այն դրել մեծ տէրութիւնների համատեղ երաշխաւորութեան ներքոյ»[51]:

Եզրափակելով իր ընդհանրացումները, հեղինակը վկայակոչում է Գլադստոնի եւ Վանդալի կողմից Աբդուլ Համիդին՝ համապատասխանաբար «մարդասպան սուլթան» եւ «կարմիր սուլթան» տրուած մականունները: Ըստ նրա, Գլադստոնի գնահատականն ընդգրկուն չէ, քանզի «զոհերի թիւը հասնում է գրեթէ 150000-ի, իսկ այդ առումով՝ 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմն առաւել սարսափազդու չի եղել»[52]:

ԺԹ. դարի 90-ական թուականներին հայ ժողովրդին բազմիցս սատարել է ֆրանսիացի խոշոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1892) Էրնեստ Լաւիսը (1842-1922): Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեանը նուիրուած յօդուածներում, նա, ինչպէս եւ իր ժամանակակից ֆրանսիացի գործիչների գերակշռող մասը, հանդէս է գալիս Օսմանեան կայսրութեան ամբողջականութեան պահպանութեան դիրքերից, հաւաստում, որ «Ֆրանսիան Թուրքիայում ունի ֆինանսական մեծ շահախնդրութիւններ»[53]: Օսմանեան կայսրութեան հովանաւորի դերում հանդէս գալը համարելով Ֆրանսիայի առաջնահերթ խնդիրներից մէկը, Լաւիսն, այդուհանդերձ, իր համոզմունքն է յայտնում, որ նման քաղաքականութիւնը չի ենթադրում «սուլթանին իրաւունք վերապահել վայրագ բռնակալութեան միջոցով վարկաբեկել այդ կայսրութեան գոյութեան իսկ փաստը»: Աւելին, նա գտնում է, որ Ֆրանսիայի պարտականութիւնների մէջ է մտնում Օսմանեան կայսրութիւնում բնակուող եւ անկախութեան տենչացող ազգութիւնների վերածնութեանը զօրաւիգ լինելը[54]:

Թէեւ Լաւիսը մանրակրկիտ ձեւով չի քննարկում հայկական կոտորածների ըն-

© National Library of Armenia

թացքը, նրա որոշ դիտարկումներն, այնուամենայնիւ, հնարաւորութիւն են ընձեռում պատկերացում կազմել այդ իրադարձութեան շուրջ նրա ունեցած դիրքորոշման վերաբերեալ: Օսմանեան կառավարութիւնը բնութագրելով իբրեւ «կոպիտ, բարբարոսական եւ արատաւոր»[55], նա «սարսափելի ճգնաժամի գլխաւոր պատճառ» համարում է Աբդուլ Համիդին, նշելով, որ «Արեւելեան հարցն արդի ժամանակաշրջանում վերածուել է սուլթանի հարցի»[56]:

Աբդուլ Համիդին մէկ այլ առիթով անուանելով «վախկոտ բռնակալ, որին ատում են եւ արհամարհում իրենք իսկ՝ մահմեդականները»[57], Լաւիսը Հայոց ցեղասպանութիւնը մեկնաբանում է իբրեւ կանխամտածուած եւ նախապէս ծրագրաւորուած իրադարձութիւն, 1895 թուականը համարում «մռայլ ժամանակաշրջան», երբ «կոտորածները յաջորդում էին կոտորածներին»[58]: 1895 թ. Տրապիզոնում տեղի ունեցած ջարդերի առիթով, օրինակ, նա նշում է. «Այսօր մենք իրազեկ ենք այդ կոտորածի սարսափազդու մանրամասներին, որն իրականացուել է յստակ հրամանի հիման վրայ, սկսուել ու աւարտուել ըստ տրուած ազդանշանի»[59]:

Լաւիսի յօդուածներում աչքի է զարնում մեծ տէրութիւնների եւ, մասնաւորապէս, Ֆրանսիայի ղեկավար շրջանների՝ հայ ժողովրդի ճակատագրի հանդէպ դրսեւորած անկարեկից վերաբերմունքի, Օսմանեան կայսրութեան ներքին գործերին միջամտելու ցանկութեան բացակայութեան քննադատութիւնը, հանգամանք, որը սուլթանին լայն հնարաւորութիւններ է ընձեռել անշեղօրէն կենսագործելու արեւմտահայութեան համատարած ոչնչացման քաղաքականութիւնը: Օսմանեան բանկի գրաւման հետ կապուած միջադէպի առիթով, օրինակ, նա գրում է.. «Անողոք բռնութիւնները, որոնք բազում շաբաթներ ի վեր նախապատրաստուել էին դաւադրութեանն իրազեկ օսմանեան իշխանութիւնների կողմից, սարսափելի կոտորածները, որոնք դեսպանների աչքի առջեւ յարատեւել են բազմաթիւ օրեր, ապացուցել են, թէ որքան էր սուլթանը համոզուած այն բանում, որ Եւրոպայից երկիւղելու ոչինչ չունի»[60]:

Լաւիսը խարազանում է յատկապէս Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Գաբրիէլ Հանոտոյի (1853-1944) Թրքամէտ քաղաքականութիւնը, որի ջանադրութեան շնորհիւ «Դեղին գրքում» զետեղուած մեծ թուով փաստաթղթեր հրատարակուել են կրճատումներով[61], Ֆրանսիական կառավարութեան՝ հայկական կոտորածների իրողութիւնը Ֆրանսիական հասարակայնութիւնից քողարկելու շահագրգռուածութիւնը բնութագրում իբրեւ «լռութեան դաւադրութիւն»[62], ընդգծում դրա կազմակերպիչների վրայ բարդուող մեծ պատասխանատուութիւնը: «Ճգնաժամը շարունակւում էր,– գրում է Լաւիսը,– կոտորածները կրկնւում էին, կարմիր բիծը ծաւալւում էր, իսկ սուլթանը շարունակում էր ստել: Այս ամէնը միմեանց յաջորդում էին կառավարութեան եւ մամուլի լռակեցութեան, հասարակութեան անիրազեկութեան պայմաններում»[63]:

Ընդհանուր բնոյթի ուսումնասիրութիւնների թւում իր ուրոյն տեղն ունի Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1913) Էտիեն Լամիի (1845-1919) «Լեւանտի Ֆրանսիան» մենագրութիւնը[64], ուր մանրակրկիտ ձեւով վերլուծուած են Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեան ելեւէջները: Համիդեան կոտորածները դարձնելով ուսումնասիրութեան

հանգամանալից առարկայ, նա հայերի ճակատագիրն Օսմանեան կայսրութիւնում քննարկում է ոչ թէ իբրեւ մասնակի երեւոյթ, այլ օսմանեան լծի ներքոյ հեծող քրիստոնեայ ժողովուրդներին վիճակուած տառապանքների ընդհանուր յենքի վրայ, որոնց ազգային ինքնագիտակցութեան զարթօնքը պայմանաւորում է հպատակների նկատմամբ թուրքերի հաստատած տիրապետութիւնը դատապարտող՝ ԺԸ դարի Ֆրանսիական բուրժուական մեծ յեղափոխութեան առաջադրած վեհ սկզբունքներով: «Այդ պահից ի վեր, նրանց իղձերի անսանձելի հաստատակամութեան եւ ապստամբութիւնների հետեւանքով Օսմանեան կայսրութեան առջեւ ծառացել է մեծ բարդութիւնների հետ կապուած գոյատեւման խնդիրը»,– գրում է նա[65]:

Բնութագրելով հայերին իբրեւ «խելացի, հարուստ, ճկուն եւ ճարպիկ» ժողովուրդ, նշելով XIX դարի ընթացքում նրանց փափաքած՝ պաշտամունքի ազատութեան, անձի ապահովութեան եւ այլ իղձերի մասին, հեղինակը հաւաստում է, որ իրերի խաղաղ վիճակը յարատեւել է մինչեւ Աբդուլ Համիդի գահակալութիւնը: Վերջինս, ինչպէս նա մեկնաբանում է, «ցանկացել է միաժամանակ ճնշել կայսրութեան տարածքային ամբողջականութեանը սպառնող ազգային շարժումները եւ ձախողել լիբերալ բարեկարգումները, որոնք, նոյնիսկ մահմեդականների շրջանում, քաջալերելով յեղափոխական ոգին՝ ի զօրու էին սասանելու գահը եւ սպառնալու սուլթանի կեանքին»: Նմանօրինակ երկիւղներից նա վճռել է ձերբազատուել «իսլամական ոգուն, նախկին բռնապետութեանը բնորոշ միջոցներին վերադառնալու եւ քրիստոնեայ ազգութիւնների նկատմամբ՝ մահմեդական ազգութիւններին տրամադրուող գերիշխանութեան միջոցով»[66]: Կռահելով սուլթանի քաղաքականութեան բուն իմաստը, Լամին մատնանշում է, որ Աբդուլ Համիդը ցանկանում էր «ճնշուածների կողմից բռնութեան դէմ մղուող դիմադրութեանը բռնութեան տեսք տալ եւ նրանց, ովքեր պաշտպանում էին իրենց ունեցուածքները, կանանց, երեխաներին՝ ներկայացնել իբրեւ օրինական իշխանութեան դէմ ոտքի ելած ապստամբների»[67]:

Ջանտեսելով 1890 թ. ի վեր հայերի կացութեան վատթարացումը, 1894 թ. սկիզբ առած ջարդերը, Լամին ուշադրութիւնը կենտրոնացնում է ամենակարեւոր՝ ցեղասպանութեան իբրեւ պետական քաղաքականութեան մակարդակով իրականացուող եղելութեան հանգամանքի վրայ: Սուլթանը, որն օգտուելով եւրոպական տէրութիւնների տարաձայրոպական մտադրութիւնների, պատրաստւում էր լայնահուն ընթացք տալ հայերի բնաջնջման գործընթացին, նահանգներն է ուղարկում իր բանագնացներին, որոնք իրենց հետ տանում էին կոտորածների իրականացմանն առնչուող հրամանները: Միայն դրանք ստանալուց յետոյ են, ըստ նրա, տեղերում ձեռնամուխ եղել հայերի զանգուածային ոչնչացմանը, որի հետեւանքով, համաձայն հեղինակի տուեալների, 1895 թ. «սպանւում է, այրւում կամ կենդանի յուղարկաւորւում 150000 տղամարդ, կին եւ երեխայ, իսկ 80000-ը զոհւում է թշուառութիւնից»: Ֆրանսիացի պատմաբանը նրանց համարում է եւրոպական տէրութիւնների «անգործունէութեան» զոհեր: «Բարենորոգումների գաղափարը ջրասոյզ էր լինում համակարեան մէջ, գոյատեւում էր միայն յեղափոխութեան գաղափարը, որը յանգեցնում էր վրէժխնդրութեան»,– նշում է նա[68]:

© National Library of Armenia

Այս առումով յատկանշական է այն բացատրութիւնը, որը Լամին. տալիս է սուլթանի դիրքորոշմանը՝ կապուած հայ գրոհայինների կողմից Օսմանեան բանկի գրաւման հետ: Կասկածից վեր համարելով Աբդուլ Համիդի իրազեկութիւնը նախապատրաստուող գրոհին, նա սուլթանի թողտուութիւնը մեկնաբանում է իբրեւ ցեղասպանութեան. գործընթացի ծաւալման համար տարերայնօրէն ի յայտ եկած՝ պատեհ առիթը բաց չթողնելու խորամանկ մտադրութիւն: Խօսքը վերաբերում է մի առիթի, որը սուլթանը, յիրաւի, անյապաղ օգտագործել է հերթական անգամ կայսրութեան մայրաքաղաքի փողոցներն արեան ալիքներով ողողելու համար, որոնք, ըստ նրա տուեալների, կլանել են 8000 մարդկային կեանք: Ֆրանսիայի չափաւոր դիրքորոշումն այս հարցում Լամին բնորոշում է իբրեւ մի վարքագիծ, որը վարկաբեկել է պետութեան բարոյական հեղինակութիւնը:

Ակնյայտ է, որ Լամին, իրադարձութիւնները մեկնաբանում է միանգամայն անկողմնակալ դիրքերից, սակայն, Ֆրանսիական կառավարութեան քաղաքականութեան քննադատութեան հարցում դրսեւորում զուսպ վերաբերմունք: Հարկ է նշել, որ նրա հաղորդած ոչ բոլոր տեղեկութիւններն են հաւաստի: Մասնաւորապէս, իրականութեան հետ որեւէ աղերս չունի հեղինակի այն պնդումը, ըստ որի «ամբողջ Թուրքիայում սփռուած հայ ազգութիւնը ոչ մի տեղ, նոյնիսկ իր անունը կրող երկրամասում, մեծամասնութիւն չէր կազմում»[69]:

Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը հպանցիկ ձեւով քննարկել է նաեւ Ֆրանսիացի մէկ այլ մեծ պատմաբան՝ Շառլ Սենոբոսը (1854-1942), որը ԺԹ. դարի Եւրոպայի քաղաքական պատմութեանը նուիրուած ուսումնասիրութեան մէջ տուել է Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած անցքերի համառօտ, սակայն անկողմնակալ գնահատականները: Նշելով, որ արեւմտահայութեան հանդէպ Աբդուլ Համիդի վարած քաղաքականութիւնը 1890 թ. ի վեր փոփոխութիւններ է կրել, նա յիշատակում է հայկական յեղափոխական փոքր կուսակցութեան ձեւաւորման մասին, որը հայերի համար պահանջում էր «ինքնավարութիւն եւ անձնական անվտանգութեան երաշխիքներ, այլ ոչ թէ անջատում կայսրութիւնից»: Այդ պահանջներն, ըստ նրա, պատճառ են դարձել նախ՝ «իրական կամ կարծեցեալ յեղափոխականներին» դատապարտելու, այնուհետեւ՝ 1894-1895 թթ. «զանգուածային կոտորածների» համար, որոնք ղեկավարւում էին «մահմեդական իշխանութիւնների եւ իրականացւում զինուորների կամ վարձու մարդասպանների կողմից, սակայն պաշտօնապէս Եւրոպային ներկայացւում իբրեւ հայկական ապստամբութիւններ»[70]:

Ինչպէս տեսնում ենք, նոյնիսկ համառօտ դիտարկումներով սահմանափակուելով եւ մանրամասների մէջ խորամուխ լինելուց ձեռնպահ մնալով հանդերձ, Սենեբոսն իրադարձութիւններն արժէքաւորել է ըստ արժանւոյն:

Հայկական կոտորածներին հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ է տուել նաեւ Ժորժ Բեքերը՝ ԺԹ. դարի 80-90-ական թուականների բալկանեան պատերազմների եւ Արեւելեան հարցի պատմութիւնը լուսաբանող ուսումնասիրութեան մէջ[71]: Ջժխտելով «վերջին ժամանակներում» անկախութիւն ձեռք բերելու ճանապարհին՝ հայերի մտադրութիւնները եւ բարենորոգումների կենսագործման նպատակով՝ նրանց հիմնադրած կուսակցութիւնների գոյութեան

փաստը, Բեքերն, այդուհանդերձ, ամբողջութեամբ բացայայտում է Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականութեան էութիւնը. «Սուլթան Աբդուլ Համիդը,– գրում է նա,– Հայաստանում տեղի ունեցող անկարգութիւնները ճնշելու պատրուակի ներքոյ, բազում անգամներ այդ տարածաշրջան է ուղարկել զինուած հրոսակախմբեր, որոնք կոտորել են հազարաւոր քրիստոնեաների: Սուլթանի յանցակցութիւնը մարդասպանների հետ որեւէ մէկի մօտ կասկած այլեւս չի յարուցում»: Յենուելով «Դեղին գրքում» ամփոփուած փաստաթղթերի վրայ, հեղինակը հաւաստում է նաեւ Հայոց ցեղասպանութեան՝ իբրեւ նախապէս ծրագրաւորուած եղելութեան փաստը:

Բեքերը համոզմունք է յայտնում, առ այն, որ եթէ կայսրութեան տարածքում տէրութիւնների կողմից սուլթանին պարտադրուած բարենորոգումների ծրագիրն անշեղօրէն չիրականացուի, ապա հայկական կոտորածները, որոնք, ի դէպ, նա բնութագրում է իբրեւ «սարսափելի», իւրաքանչիւր պահի կարող են վերսկսուել:

Աբդուլ Համիդին նա տալիս է սպառիչ գնահատականներ, անուանում նրան բարենորոգումների բացայայտ թշնամի, որը դրանք կ'ընդունի միայն այն պարագայում, եթէ տէրութիւնները դանակը նրա կոկորդին հպեն: Ըստ Բեքերի, Աբդուլ Համիդը հմտօրէն համաձայնութիւնների է յանգում՝ իր իսկ խոստացած բարենորոգումների ծրագրի իրականացումը տապալելու նպատակով: Սուլթանի քաղաքականութեանն առնչուող նրա բացատրութիւնները, սակայն, ամենեւին սպառիչ չեն, քանզի նա այն մեկնաբանում է ելնելով գլխաւորապէս կրօնական գործօնի՝ վերջինիս կայացրած որոշումների վրայ թողած վճռորոշ նշանակութիւնից: Բեքերի համոզմամբ սուլթանը «զգում է, որ այս բարենորոգումները միտում ունեն հաւասարութեան եզրեր սահմանելու քրիստոնեաների եւ մահմեդականների միջեւ, հողմացրիւ անելու իր հպատակների կոյր հաւատը եւ գիտակցում, որ փոքր անց դրանք իր ձեռքերից կը կորզեն այն հզօր լծակը՝ կրօնական մոլեռանդութիւնը, որի միջոցով կարող է ոտքի հանել ողջ թրքական կայսրութիւնը»: Ջժխտելով հանդերձ Բեքերի իրաւացիութիւնն այս հարցում, նշենք, այնուամենայնիւ, որ բարենորոգումների ծրագրերի կենսագործման տապալման իրողութիւնը խարսխւում էր շատ աւելի լայն յենքի վրայ, քան այն ներկայացուած է նրա կողմից: Բուլղարիայի՝ կայսրութիւնից անջատման իրողութիւնից ահաբեկուած սուլթանն, անկասկած, շատ աւելի սոսկում էր հայկական վիլայեթներին ինքնավարութիւն տրամադրելու հեռանկարից, հանգամանք, որն ամբողջութեամբ շրջանցուել է Բեքերի կողմից:

Արեւելեան հարցի եւ մասամբ Հայկական հարցի պատմութեանն առնչուող հարցերն արծարծուել են նաեւ Ռ. Պինոյի գրքում, որը վերջինիս ծագումը պայմանաւորում է Բեռլինի վեհաժողովում սկիզբ առած քննարկումներով[72]: Պինոյի շարադրանքում չկան հայկական կոտորածների նկարագրութիւններ եւ դրանց տրուած գնահատականներ, քանզի նրա ուշադրութեան կենտրոնում լոկ դիւանագիտական յարաբերութիւնների պատմութիւնն է:

Հանգամանօրէն անդրադառնալով մեծ տէրութիւնների քաղաքականութեանը, Պինոն չանում է բացայայտել Հայոց ցեղասպանութեան հարցում նրանց անտարբեր վարքագծի պատճառները եւ, մասնաւորապէս, Ֆրանսիայի որդեգրած քաղաքականութեան

© National Library of Armenia

էութիւնը, որը յանգում էր Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանմանը: Այս բանաձեւը, ինչպէս նա նշում է, դարձել էր Ֆրանսիայի աւանդական քաղաքականութեան հիմնահարցերից մէկը, որը նա յարմարեցրել էր «իր կարիքներին եւ արդի հետաքրքրութիւններին»[73]: Ինչ վերաբերում է տէրութիւնների կրաւորականութեանը, ապա Պինոն այդ իրողութիւնը հիմնաւորում է մասամբ նրանց ծուատող տարաձայնութիւններով, մասամբ հայ յեղափոխականների գործունէութեամբ, քանզի նման պայմաններում եւրոպական պետութիւնների միջամտութիւնը կարող էր քաջալերել Թուրքիայում այնպիսի ոճիրների իրականացմանը, որոնց դէմ նրանք խիստ օրէնքներ էին կիրառում իրենց երկրներում: Իսկ այս ամէնն Աբդուլ Համիդին հնարաւորութիւն էր ընձեռում «բաւարարուելու լայնահուն խոստումներով, յետաձգելու իւրաքանչիւր բնոյթի բարենորոգումներ եւ շարունակելու կոտորածները»[74]:

Պատմաբաններից զատ Հայկական հարցի ծագումը եւ ցեղասպանութեան նախադրեալները հանգամանօրէն վերլուծել է իրաւաբանութեան դոկտոր Մաքս Շուբլիէն[75], որն օգտագործել է անգլիական եւ ֆրանսիական Արտաքին գործերի նախարարութիւնների արխիւների վաւերագրերն ամփոփող «Կապոյտ» եւ «Դեղին» գրքերը: Հայկական հարցի ծագումը նա իրաւամբ պայմանաւորում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին յաջորդած դիւանագիտական մեքենայութիւններով: Քննարկելով այն իրավիճակը, որում գտնւում էին արեւմտահայերը Բեռլինի վեհաժողովին յաջորդած տարիների ընթացքում, Շուբլիէն հաւաստում է, որ նրանց վիճակն աստիճանաբար դարձել է աւելի անելանելի, իսկ թուրքերն, ի վերջոյ, ընտրել են նրանց զանգուածաբար ոչնչացնելու տարբերակը:

Այս յենքի վրայ նա քննարկում է օսմանեան կառավարութեան խորամանկ քաղաքականութեան ելեւէջները, որը «Հայաստանը հեղեղում էր հազարաւոր՝ չերքեզ եւ այլ վերաբնակներով՝ բնակչութեան ընդհանուր թւում հայերի քանակն, անկասկած, նուազեցնելու միտումով»[76]: Իսկ վերջիններս որդեգրում են իրենց գոյութիւնը պահպանելու երկու հիմնական՝ հայ բնակչութեանը կողոպտելու եւ կոտորելու ուղիները: «Հայերի կացութիւնը,– նշում է նա,– դառնում էր նոյնիսկ աւելի վատթար, քան ռուս-թրքական պատերազմից առաջ»[77]:

Շուբլիէն տրամաբանական կապ է արձանագրում սուլթանի՝ բարենորոգումները կենսագործելու խնդրում դրսեւորած չկամութեան եւ հայերի շրջանում անկախութեան գաղափարի հասունացման միջեւ: Չնայած տէրութիւնների միջամտութիւններին, «սուլթանը,– ինչպէս նա նշում է,– չէր կամենում կատարել այն խոստումները, որոնք իր հպատակներին տուել էր միայն ուժի գործադրման ներքոյ եւ որոնց պահանջները, նրա կարծիքով, հաւասարազօր էին խռովութեան»[78]: Այսպէս, բարենորոգումների իրականացման ասպարէզում օսմանեան կառավարութեան ցուցաբերած յամառութիւնը, քրիստոնեայ կառավարիչ ունենալուն, քաղաքացիական օրէնսգրքի մշակմանը, հարկերի կարգաւորմանն առնչուող՝ հայերի պահանջների անտեսումը, դրդում է վերջիններիս արտասահմանում հիմնադրել կուսակցութիւններ, որոնց գլխաւոր նպատակը յանգում էր «բոլոր եղանակներով, այդ թւում ապստամբութեան միջոցով, հարկադրել օսմանեան կառավարութեանը բարենորոգումների իրականացումը» եւ որոնք

«խորհուրդ էին տալիս իրենց եղբայրներին գործել յանուն հայրենիքի ազատագրման եւ ուժի միջոցով դիմակայել կեղեքիչներին»[79]: Հաւանաբար, իրադարձութիւնների հետագայ զարգացման ընթացքն ու աւարտը հաշուի առնելով, կուսակցութիւնների խորհուրդներին հետեւելու իրողութիւնը Շուբլիէն հայերի համար համարում է «դժբախտութիւն»:

Ինչ վերաբերում է Համիդեան վարչակարգի քաղաքականութեանը, ապա Շուբլիէն չի շրջանցում Աբդուլ Համիդի ստոր գործելամիջոցները, Համիդիէ հեծելազօրային գնդերի կազմաւորումը մեկնաբանում է թէ՛ հայերի շրջանում խռովութիւններ հրահրելու եւ թէ՛ դրանք ճնշելու միջոցներն ապահովելու՝ նրա մտադրութեամբ: Հայերին զոհասեղանին դնելուց առաջ՝ նրանց իբրեւ ապստամբներ ներկայացնելու հանգամանքը, ըստ հեղինակի, Դռան կողմից հետապնդուող հիմնական նպատակներից էր:

Բուն ցեղասպանութիւնը Շուբլիէն դիտում է իբրեւ պետական մակարդակով իրականացուող եղելութիւն. «Դուռը վճռել է նրանց (հայերին – Վ. Պ.) բնաջնջել երկաթի, կրակի եւ սովի միջոցով»,– նշում է նա[80]: Հեղինակը բացայայտում է օսմանեան կենտրոնական իշխանութիւնների մեղսակցութիւնը տեղի ունեցած զանգուածային բռնութիւններին, որոնց ծաւալման համար նշանաբան են ծառայել տէրութիւնների կողմից պահանջուող բարենորոգումների կենսագործմանն առնչուող լուրերը: 1895 թ. աշնանը Կոստանդնուպոլսում կազմաւորուած արիւնալի անցքերի առիթով, օրինակ, նա ընդգծում է պետական մարմինների անգործունէութիւնը, որոնք դրանք կանխելու համար ոչինչ չեն ձեռնարկել:

Մանրամասն վերլուծելով եւրոպական պետութիւնների քաղաքականութիւնը Հայկական հարցում, Շուբլիէն շեշտում է յատկապէս, նրանց մեղսակցութիւնը 1896 թ. կոտորածներին: Ըստ նրա, հայերին օգնութիւն ցուցաբերելու գործում մեծ տէրութիւններին մեծապէս խոչընդոտել է «փոխադարձ անվստահութիւնը, որը կազմալուծել է նրանց գործողութիւնները»[81]: Օսմանեան կայսրութեան մասնատման խնդրի առիթով Շուբլիէն հաւաստում է, որ դրա տարածքային ամբողջականութեան պահպանումը տէրութիւնները վերածել էին «դոգմայի» եւ «հրաժարուել ռազմարշաւից, որը կարող էր յանգեցնել կայսրութեան ողջ տարածքում բնակուող քրիստոնեաների համընդհանուր կոտորածի»[82]: Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանութիւնները եթէ անիրատեսական չեն, ապա միանգամայն թերի են, քանզի կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման խնդրում տէրութիւնները մեծ շահախնդրութիւն էին հանդէս բերում ելնելով գլխաւորապէս իրենց ռազմավարական եւ ֆինանսական շահերից:

Հայոց ցեղասպանութիւնը, յիրաւի, բարդ գործընթաց է, որն ունեցել է զանազան դրդապատճառներ, որոնցից մէկն իրաւամբ նկատել է Պոլ դը Ռեգլան: Համիդեան կոտորածների մեկնաբանման հարցում ձեռնպահ մնալով համակողմանի մօտեցում ցուցաբերելուց, նա, սակայն, ի տարբերութիւն այլոց, ուշադրութիւնը կենտրոնացնում է մէկ այլ էական հանգամանքի վրայ՝ այն պատճառաբանում Օսմանեան կայսրութիւնում հայերի ծաւալած ֆինանսական, արդիւնաբերական եւ առեւտրական գործունէութիւնը կասեցնելու սուլթանի դիտաւորութեամբ: Այս իսկ պատճառով, ըստ նրա, Աբդուլ Համիդը հրահրել է սարսափազդու կոտորած, որը «երբեւէ

© National Library of Armenia

յայտնի է եղել» եւ իր երկիրը զրկել այն աջակցութիւնից, որը խարսխուած էր հայ ժողովրդին յատկացուած աննշան ազատութիւնների վրայ[83]:

Ցեղասպանութեանն առնչուող որոշ հարցեր հպանցիկ ձեւով արտացոլուել են նաեւ Աբդուլ Համիդին նուիրուած՝ Ժորժ Դորիսի գրչին պատկանող կենսագրական ուսումնասիրութեան մէջ, որտեղ անկողմնակալօրէն վերհանուած են սուլթանի քաղաքականութեան ղանազան ծալքերը եւ ուրուագծուած է նրա բուն դիմագիծը[84]: *Հեղինակն իրաւամբ գտնում է, որ ազգային փոքրամասնութիւնների հանդէպ վարած քաղաքականութեան ասպարէզում սուլթանն ի սկզբանէ որդեգրել էր «Divide et impera» սկզբունքը եւ «վերացնում էր այն արտոնութիւնները, որոնք կայսրական հրովարտակներով յատկացուել էին ոչ մահմեդական համայնքներին»*[85]: *Նա յիշատակում է 1895 թ. Աբդուլ Համիդի՝ «Բոսֆորի ալիքները բոլոր հայերի արեամբ բոսորագոյն դարձնելուն» առնչուող յայտարարութիւնը եւ դրանով ընդգծում է ցեղասպանութեան կանխամտածուած բնոյթը*[86], *1896 թ. ծաւալուած իրադարձութիւններն անուանում «մեծ սպանդ»*[87]:

Տալով՝ իր ողջ գործունէութեան ընթացքում «Պետութիւնը դա ես եմ» եւ «Ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ» կարգախօսներով առաջնորդուած օսմանեան գահակալի գործունէութեան ընդհանուր գնահատականը, հեղինակը մասնաւորապէս նշում է. «Իր հարազատներին, ինչպէս նաեւ իր հպատակներին նա միայն երկիւղ ու սարսափ է ներշնչել եւ թէ՛ իւրայինների, թէ՛ իր ժողովրդի համար կը մնայ իբրեւ այնպիսի մի բռնակալ, ինչպիսին, որ կայ ողջ մարդկութեան համար, իսկ պատմութեան առջեւ՝ իբրեւ Կարմիր սուլթան»[88]:

Մեր կողմից քննարկուող թեմայի ուսումնասիրութեան կտրուածքով նուազ հետաքրքրութիւն է ներկայացնում օսմանեան նախկին պաշտօնեայ Պ. Ֆրեմոնի՝ Աբդուլ Համիդի գահակալութեանը նուիրուած աշխատութիւնը, թէեւ նրան եւս յաջողուել է հիմնաւորապէս բացայայտել այն իրավիճակը, որն առկայ էր Օսմանեան կայսրութիւնում[89]: *Հայոց ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ քրիստոնեայ ժողովուրդների բնաջնջման փաստը չդարձնելով ուսումնասիրութեան առարկայ, հեղինակը բաւարարւում է Օսմանեան կայսրութեան տարածքում բնակուող քրիստոնեայ հպատակների ոչնչացմանն առնչուող թուացիկ ակնարկներով*[90]: *Ուրուագծելով Օսմանեան կայսրութիւնում տիրող բռնակալական վարչակարգի մանրամասն եւ արժանահաւատ պատկերը (պետական մարմինների կողմից չարաշահումներ, նահանգներում իշխանութեան ներկայացուցիչների գործադրած բռնութիւններ, աստիճանաւորների շրջանում կաշառակերութեան աճ, աւազակութեան եւ գողութեան աննախադէպ ծաւալ եւ այլն), հեղինակն, ըստ էութեան, որեւէ զանազանութիւն չի նշմարում այն կացութիւնների միջեւ, որոնցում գտնւում են սուլթանի մահմեդական եւ քրիստոնեայ հպատակները, քանզի, ըստ նրա, «առաջինները տառապում են նոյնքան, եթէ ոչ աւելի, քան երկրորդները, սակայն որեւէ մէկը նրանց հարցը եւրոպական հասարակական կարծիքի դատին չի ներկայացնում»*[91]:

Ելնելով շարադրանքից, կարելի է ենթադրել, որ օսմանեան կայսրութիւնում տիրող իրավիճակին քաջածանօթ հեղինակը շրջանցել է քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ համիդեան վարչակարգի կողմից կիրառուող հալածանքները եւ կոտորածները,

հաւանաբար, տուրք տալով Ֆրանսիական կառավարութեան թրքամէտ քաղաքականութեանը կամ կատարել է յատուկ պատուէր:

Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը ժխտող տեսակէտը խոր արմատներ ունի պատմագրութեան մէջ: Նման բնոյթի տպածոներ լոյս են տեսել դեռեւս կոտորածների արշալոյսին: Դիցուք, մեր կողմից ուսումնասիրուող ժամանակաշրջանում Ֆրանսիայում եւս հրատարակուել են յօդուածներ ու գրքոյկներ, որոնց հեղինակները, տուրք տալով Ֆրանսիական կառավարութեան թրքամէտ քաղաքականութեանը, հարցը մեկնաբանել են ելնելով օսմանեան կառավարութեանը սիրաշահելու դիրքերից: Այս ասպարէզում առաջնութեան դափնին, անտարակոյս, պատկանում է 1894-1895 եւ 1896-1898 թթ. Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1897), մոլի թրքամէտ Գաբրիէլ Հանոտոյին, որն իր ողջ հեղինակութիւնը, ըստ հայ ժամանակակիցների վկայութեան, գործադրում էր հայկական կոտորածներին առնչուող հայկական տեղեկութիւնները հանրութեան լայն խաւերից քողարկելու համար[92]: *Հանոտոյի դիրքորոշման լաւագոյն առնոտոյի դիրքորոշման հաւատչեան, սակայն, «Ռեւիւ դը Պարի» ամսագրում լոյս ընծայուած «Արեւելքում» խորագիրը կրող անստորագիր յօդուածն է*[93], *որն ըստ ժամանակակիցների վկայութեան պատկանում է նրա գրչին*[94]:

Հանոտոյի մտորումներում աչքի է զարնում Աբդուլ Համիդին գովերգելու միտումը, որն, ըստ նրա, «շատ ուշադիր է եւ խիստ շրջահայեաց, որպէսզի հնարաւոր լինի նրան անակնկալի բերել: Իրականում,– շարունակում է հեղինակը,– նա տեսնում է այն, ինչ մենք չենք նշմարում... Երբ մենք նրան մեղադրում ենք անուշադրութեան մէջ, նրա ուշադրութիւնն ամբողջութեամբ կլանուած է լինում մեր անփոյթ հայեացքից վրիպող կարեւոր գործերով»[95]: *Աբդուլ Համիդին համարելով «աստուածավախ մահմեդական», յանձին որի, մահմեդականութիւնն Օսմանեան կայսրութիւնում գտել է իր առաջնորդին, նա, այդուհանդերձ, նշում է, որ սուլթանն «իր այլ հպատակների հանդէպ ցուցաբերել է քնքշութեան, մեծահոգութեան եւ անկողմնակալութեան յատկանիշներ»*[96]: *Ուստի՝ Հանոտոն համոզմունք է յայտնում առ այն, որ միայն նա է ի զօրու լուծել «Հայաստանն արիւնաներկ արած բռնութիւնների եւ չարաշահումների հետեւանքով անցեալ ձմռանը ծառացած խնդիրը»*[97]:

Ինչպէս տեսնում ենք, Հանոտոն չի ժխտում հայկական կոտորածների փաստը, այդուհանդերձ, հմտօրէն շրջանցում է դրանց պատասխանատուների դիմազերծումը եւ գտնում, որ «խօսքն, ընդհանուր առմամբ, վերաբերում է քրիստոնեաների եւ մահմեդականների միջեւ տեղի ունեցող պայքարի մասը կազմող հազարից մէկ միջադէպի», այլ ոչ թէ պետական քաղաքականութեան վրայ խարսխուած ցեղասպանութեան: Աւելին, նա չի տարակուսում, որ այդ միջադէպը կարող էր կարգաւորուել «փոխադարձ զիջումների» ճանապարհով, եթէ կանխապէս ձեռնարկուէին անհրաժեշտ միջոցներ: Հանոտոն կտրականապէս դէմ է արտայայտւում եւրոպական տէրութիւնների միջամտութեանն Աբդուլ Համիդի ներքին գործերին, որը կարող էր յանգեցնել Օսմանեան կայսրութեան՝ մեծ տէրութիւնների համար խիստ անցանկալի տրոհմանը: Ուստի՝ խնդրոյ առարկայ հարցում իր դիրքորոշմանը հիմնաւորում տալու դիտաւորութեամբ, նա մեղաւորի դերում ներկայացնում է եւրոպական այն պե-

© National Library of Armenia

տութիւններին, որոնց ներկայացուցիչները զբաղուել են Սասունի կոտորածների հետաքննութեամբ[98] եւ սուլթանի անվճռականութիւնը պայմանաւորում է միմիայն մեծ տէրութիւնների միջամտութեամբ, որը, «շատ է երկարաձգուել» եւ դարձել, ըստ նրա պատումի տրամաբանութեան, հարցի լուծման ձախողման միակ պատճառը[99]:

«Վերջին խռովութիւնների ամենացաւոտ հետեւանքը՝ Եւրոպայի նոր միջամտութեան հիմնաւորումն է»,– գրում է Հանոտոն[100]: Ֆրանսիայի ղեկավար շրջանների համար խիստ անցանկալի՝ այս հարցի կապակցութեամբ նա առաջադրում է փակուղուց ելնելու, իր համոզմամբ, լաւագոյն տարբերակը: «Հարկ է, որ այն (ճգնաժամը – Վ. Պ.) դիտուի իբրեւ միայն ներքին հարց: Հենց սա է, որ պէտք է ցանկանան ամէնքը: Սուլթանը մնում է իր երկրի տէր ու տնօրէնը»[101]: Միաժամանակ քաջ գիտակցելով, որ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին մեծ տէրութիւնների միջամտութեան կասեցումը պայմանաւորուած է գլխաւորապէս սուլթանի ներքին քաղաքականութեամբ, Հանոտոն ուշադրութիւնը կենտրոնացնում է այն ուղիների վրայ, որոնք, ըստ նրա, հարցի խաղաղ կարգաւորման գործընթացում կարող էին ունենալ էական նշանակութիւն: «Հարկ է, որ նա (սուլթանը – Վ. Պ.) հակուած լինի շտապ իրականացնելու իր ստանձնած պարտաւորութիւնները... Ամէն ինչից զատ, հարկ է խուսափել այն ամէնից՝ քրիստոնեաների հանդէպ բռնութիւններից, օտարերկրացիների համայնքների կամ համայնքների անդամների վրայ յարձակումներից, ինչը կարող է առիթ տալ տէրութիւնների ուղղակի միջամտութեանը»[102]: Ֆրանսիայի ռազմավարական, ինչպէս նաեւ Թուրքիայում նրա ֆինանսական շահերից բխող՝ Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան անհրաժեշտութիւնից ելնելով, Հանոտոն եզրափակիչ խօսքում եւս, ի շարս այն խնդիրների, որոնք Հայկական հարցին լուծում տալու ասպարէզում ծառացած էին օսմանեան գահակալի առջեւ, առաջնային նշանակութիւնը յատկացնում է «խելամիտ, չափաւոր, զգոյշ» բարեփոխումների կենսագործմանը[103]: Ըստ այս ամէնի, նա անվարանօրէն կոչում է Ֆրանսիացի լրագրողներին «չտարածել տագնապալից լուրեր»[104], այն է՝ շրջանցել հայկական կոտորածների հետ կապուած իրողութիւնների լուսաբանումը:

Հայոց ցեղասպանութեան մեկնաբանութեան հարցում Հանոտոյի դիրքորոշումը քննադատութեան է ենթարկուել ֆրանսիացի ժամանակակիցներից ոմանց, մասնաւորապէս, Պիեռ Քիյեառի եւ Լուի Մարժերիի կողմից, որոնք առարկել են նրա առաջադրած որոշ դրոյթների եւ հաւաստել, որ նա «որոշակիօրէն հանդէս է գալիս սուլթանի, այն է՝ Պալէի դիրքերից»[105]: Ուստի՝ Բերարն ունեցել է բոլոր իրաւունքները նրան «ֆրանսիական հասարակութեան եւ կառավարութեան առջեւ» «Աբդուլ Համիդի դատապաշտպանն» անուանելու համար[106]:

Պատահական չէ, որ տարիներ անց, երբ քաղաքական գործունէութիւնը լքելուց յետոյ Հանոտոն զբաղւում էր միայն գիտահետազօտական աշխատանքներով[107], իր հիմնական պատմագիտական ուսումնասիրութիւններից մէկում երկու ստուարածաւալ գլուխներ յատկացնելով Արեւելեան հարցի եւ 1877-1878 թթ. ռուս-թրքական պատերազմի ու Բեռլինի վեհաժողովի պատմութեան քննութեանը, շրջանցել է թէ՛ Հայկական հարցի ծագման ու գոյութեան փաստը եւ թէ՛ Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը[108]:

Ցեղասպանութեան արժանահաւատութիւնը ժխտող հեղինակներից յիշատակենք Պ. Բ. Ալլոշին, որը 1889-1891 թթ. բնակուել է Բիթլիսում եւ շրջագայել Արեւմտեան Հայաստանի զանազան նահանգներում: Թէեւ իր յուշերն ամփոփող՝ 1895 թ. վերահրատարակուած «Իրականութիւն Հայաստանի մասին» խորագիրը կրող գրքին կից առաջաբանում նա մատնանշում է, թէ իբր դրանք «վերջին պատահարների ազդեցութեան ներքոյ» չեն գրուել[109], այդուհանդերձ, ելնելով նրա պատումի ընդհանուր ոգուց, դժուար չէ կռահել, որ դա ստայօդ յայտարարութիւն է՝ որին հեղինակը դիմել է հասարակական կարծիքը թիւրիմացութեան մէջ ձգելու դիտաւորութեամբ:

Ալլոշի տեսադաշտում են երկու հիմնական գաղափարներ, որոնց վրայ նա բեւեռում է ֆրանսիական հանրութեան ուշադրութիւնը. դրանք են՝ հայերի բարեկեցութիւնն Օսմանեան կայսրութեան արեւելեան վիլայեթներում եւ Աբդուլ Համիդի բարեացակամ վերաբերմունքն իր հպատակների հանդէպ: Արեւմտեան Հայաստան այցելած, բայց տարօրինակ ձեւով իրերի բուն վիճակին «անիրազեկ» հեղինակը պնդում է, թէ իր այցելած վայրերում հայերն ամէնուր ունեն իրենց եկեղեցին եւ դպրոցը, որոնց հանդէպ կառավարութիւնը մշտապէս ցուցաբերել է անսահման բարեհաճ վերաբերմունք: Փոքր անց նոյն հարցի կապակցութեամբ նա գրում է. «Ասիայում հայերն ամէնուր ապրում են շքեղութեան մէջ»[110]:

Թէ՛ Ալլոշի այցելութիւնը Հայաստան եւ թէ՛ նրա յուշերում արտացոլուած դէպքերը ժամանակագրական առումով նախորդում են Համիդեան կոտորածներին: Այդուհանդերձ, Օսմանեան կայսրութեան տարածքում բնակուող հայերի իրավիճակին եւ կեանքի պայմաններին վերաբերող, սակայն այցելուի՝ իրականութեան հետ հեռաւոր իսկ առնչութիւն չունեցող վկայութիւնները՝ արեւմտահայերի բուն կացութեան մասին փոքրիշատէ ստոյգ պատկերացում ունեցող ընթերցողին անվարանօրէն յանգեցնում են սոսկ մէկ հնարաւոր հետեւութեան. այն է՝ հեղինակի կողմից հետապնդուող հիմնական նպատակը 1890-ական թուականների կէսերին տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւնների կազմակերպիչ Աբդուլ Համիդին՝ հայկական կոտորածների պատասխանատուութիւնից զերծ պահելն է, քանզի սուլթանին նա անսքող ձեւով վերցնում է իր հովանու ներքոյ. «Ո՞վ է մեր օրերում ցանկանում հանդէս գալ սուլթանի դէմ: Գաւառներում տեղի ունեցած մի քանի խախտումների համար պետութեան ղեկավարին պատասխանատու դարձնելը հրեշաւոր արարք է: Աբդուլ Համիդը,– շարունակում է նա,– համայն աշխարհի ամենամեծահոգի, եւ ես կարող եմ ասել, ամենաազնուաբարոյ միապետն է»[111]:

Համաձայն նրա խորհրդածութիւնների, շատերը, «յամենայն դէպս՝ անիրազեկ անձինք», չեն ցանկանում հաշուի առնել, թէ ինչպիսի «ահռելի ծանրութեան» ներքոյ է կքուած սուլթանը, որի՝ կայսրութեան ներքին նահանգներում խաղաղութիւնն ապահովելու եւ բոլոր տէրութիւնների հետ ներդաշնակութեան մէջ գոյակցելու ջանքերը նա գնահատում է իբրեւ «հերկուլեսեան արարք», առաւել եւս՝ երբ խորհում ենք այն մասին, թէ որքան տարրերից է բաղկացած Օսմանեան կայսրութիւնը եւ թէ որքան թշնամիներով է այն շրջապատուած»[112]: Դեռ աւելին. հեղինակը վկայակոչում է հմուտ դիւանագէտների, որոնք հաշուի առնելով Աբդուլ Համիդի հայեացքների

© National Library of Armenia

լայնախոհութիւնը, խելամտութիւնը, տատասկոտ հարցերում ցուցաբերած սառնասրտութիւնը, նրան անուանում են «աշխարհին զարմանք պատճառող՝ հիասքանչ սուլթան»[113]:

Խորհրդաւոր դիւանագէտների (որոնց անունները սակայն չեն յիշատակւում) կողմից տրուած վերջին բնորոշման հետ կարելի է, ընդհանուր գծերով, համամիտ լինել: Հիմնաւորելու համար այդ հաւաստումը, ցանկանում ենք յենուել Դենի Կոշենի՝ 1897 թ. փետրուարի 12-ին Ֆրանսիական Ազգային ժողովում ունեցած ելոյթի վրայ, որը հայկական կոտորածների կապակցութեամբ յայտարարել է. «Հարկ է նրան (Աբդուլ Համիդին – Վ. Պ.) արժանին հատուցել: Ամէն ինչ արուել է ըստ հիասքանչ մեթոդի: Հազարաւոր այրուած տները՝ սուլթանի հպատակների տներն էին, հարիւր յիսուն հազար կամ երկու հարիւր հազար սպանուած մարդկային էակները՝ սուլթանի հպատակներն էին»[114]:

Ալլոշի դիտարկումներում անհնար է գտնել հայկական կոտորածներին առնչուող փոքր իսկ ակնարկ. փոխարէնը՝ նա անվարանօրէն յիշատակում է այն խռովութեան մասին, որին, ըստ նրա մշուշապատ մտորումների, հայերին դրդել են դիմելու ինչ-որ խորհրդաւոր՝ «շահագրգիռ անձինք»: Հէնց վերջիններիս վրայ է, որ յուշերին կից առաջաբանում հեղինակը հեռակայ կարգով բարդում է, իր իսկ կողմից խնամքով շրջանցուած՝ 1894-1895 թթ. կոտորածների պատասխանատուութիւնը: Նրանք «թաքնւում են վարագոյրի ետեւում մինչ այն պահը, որը նրանց նպաստաւոր է թւում՝ հասարակական դժբախտութիւնից օգտուելու եւ յանուն իրենց շահերի այն օգտագործելու համար: Պ[արոնայք] առաջնդրդները լաւ կ'անեն, եթէ այցելեն այն երկրամասերը, որտեղ մենք հենց նոր շրջագայել ենք: Սակայն, խորամանկաբար, նրանք գերադասում են ապրել եւրոպական կենտրոններում, որտեղ, զարտուղի ճանապարհներով ձեռք բերուած դրամով, ոսկեզօծ եւ հարուստ կահաւորուած սենեակներում՝ վայելում են հրահրիչների՝ իրենց կեանքին համապատասխան հաճոյքներ»[115]:

Հետեւութիւնը մէկն է՝ Աբդուլ Համիդը «հրեշտակ» է, իսկ հայկական կոտորածների պատասխանատուները՝ Եւրոպայում բնակուող եւ խռովութեան դրդող հրահրիչներն են: Ստանձնած անշնորհակալ առաքելութիւնն Ալլոշին չի յաջողուել կատարել ցանկալի մակարդակով: Նա, օրինակ, չի վկայակոչում գէթ մէկ փաստ առ այն, թէ ո՞ր ասպարէզներում է երբեւէ դրսեւորուել Աբդուլ Համիդի «մեծահոգութիւնը» քրիստոնեայ հպատակների նկատմամբ կամ ե՞րբ, որտե՞ղ եւ ի՞նչ պարագաներում է ի յայտ եկել նրա «ազնուաբարոյ» վարքագիծը:

Ալլոշին ձայնակցում է, սակայն, խնդրոյ առարկայ հարցի նկատմամբ ցուցաբերուող շատ աւելի լայն ընդգրկումով, Ռ. Դե Կուրսոնը, որը եւս, ըստ իր հաւաստման, երկու անգամ այցելել է Օսմանեան կայսրութեան «ասիական նահանգները, որոնք դրանից յետոյ խռովայոյզ են եղել արհեստական ապստամբութեամբ» եւ հայկական կոտորածների հետքերով՝ այսպէս կոչուած՝ հայկական «ապստամբական շարժմանն» է նուիրել առանձին ուսումնասիրութիւն[116]: Ի տարբերութիւն նախորդ հեղինակի, նա մանրազնին քննարկում է հայկական քաղաքական խմբաւորումների եւ մասնաւորապէս Հնչակեան կուսակցութեան մասնակցութիւնը ԺԹ. դարի 90-ական թուականներին Արեւմտեան Հայաստանում սկիզբ առած «խմորումներին», որոնք հրահրում էին անգլիական կառավարութեան

կողմից: Այս երկու թեզերը Դէ Կուրսոնի գրքոյկի առանցքն են, ուստի՝ նա ջանք ու եռանդ չի խնայում դրանք հիմնաւորելու համար:

Ըստ նրա մեկնակերպի՝ օսմանեան կառավարութիւնը հայերին ընձեռել էր մայրենի լեզուով խօսելու, եկեղեցիներ, սոցիալական հաստատութիւններ, դպրոցներ ունենալու եւ մի շարք այլ արտոնութիւններ, եւ ըստ այդմ՝ վերջիններս խիստ գոհունակ էին իրենց վիճակից, իսկ յեղափոխական կամ ապստամբական տրամադրութիւնները նրանց խորթ էին: «Զկայ, այսպիսով, աւանդական հակակրանք երկու ազգութիւնների միջեւ եւ մոլեռանդ մահմեդականների կողմից քրիստոնեաների հարստահարումը միմիայն անգլիացի գրողների երեւակայութեան արգասիքն է»[117],– գրում է նա:

Ելնելով անգլիական մամուլում լոյս ընծայուած յօդուածների հեղինակների հետ Դէ Կուրսոնի բանավէճից, կարելի է պատկերացում կազմել նրա հայեացքների համակարգի մասին: Նախ՝ նա նուազեցնում է հայկական նահանգներում բնակուող հայերի թիւը, պնդում, որ մահմեդականներն այնտեղ շուրջ երեք անգամ գերազանցել են քրիստոնեաներին[118]: Զշրջանցելով հայերի ծանր սոցիալական վիճակը, Դէ Կուրսոնն, ըստ էութեան, որեւէ զանազանութիւն չի նշմարում նրանց եւ կայսրութեան մահմեդական հպատակների կացութեան միջեւ, սակայն, առանձնացնում է, այդուհանդերձ, քրիստոնեաների օգտին վկայող մէկ իրողութիւն՝ ուշադրութիւնը հրաւիրելով նրանց զինապարտ չլինելու հանգամանքի վրայ: Նա քննադատում է թուրքերին պարբերաբար զրպարտող անգլիացի տարբեր հեղինակների, որոնց փաստարկների յենքն է համարում «բոլոր իրաւախախտումների եւ քրէական յանցանքների, կողոպուտների, տեղական ընդհարումների հանրագումարը, որը հանրութեանն է ներկայացնում իբրեւ մահմեդականների վայրագութեանը զոհ դարձած խեղճ հայերի դէմ ուղղուած հալածանք»[119]: Դրանով իսկ, նա ամբողջութեամբ ժխտում է Օսմանեան կայսրութիւնում էթնիկական հողի վրայ ընթացքի մէջ գտնուող մաքրագործումների իրողութիւնը:

Ինչ վերաբերում է «անհուն մեծահոգութեամբ» օժտուած սուլթանին, ապա Դէ Կուրսոնը յայտարարում է. «եթէ ցանկութիւն առաջանայ վերընթերցելու անգլիական լրագրերի հաւաքածուն, դիւրին ձեւով կարելի կը լինի համոզուել, որ Եւրոպայում եւ ոչ մի դահակալ այդչափ լուտանքների չի արժանացել, այդչափ չի զրպարտուել եւ այդչափ չի անուանարկուել», գրքան Աբդուլ Համիդը: Ըստ նրա՝ սուլթանի հասցէին ուղղուած վիրաւորանքները հասնում են աներեւակայելի չափերի եւ անբարեացակամութեան դրոշմը կրող այդ «կողմնակալ կարծիքը յոգնեցնում է ընթերցողին, յատկապէս, երբ խորհում ենք այն մասին, որ խօսքը վերաբերում է այնպիսի նրբազգաց, խելացի, աշխատասէր միապետի, ինչպիսին է Աբդուլ Համիդը»[120]:

Դէ Կուրսոնը համոզմունք է յայտնում, որ հայկական կուսակցութիւնները, մասնաւորապէս, Հնչակեան կուսակցութիւնը, ստեղծուել են անգլիացիների հրահրմամբ եւ գործուն աջակցութեամբ: Ուստի՝ պատահական չէ, որ հայկական շարժման զարթօնքը նա պայմանաւորում է 1892 թ. Գլադստոնի իշխանութեան գլուխ անցնելով, իսկ հայկական կուսակցութիւնների «հրահրիչ» գործունէութիւնը ներկայացնում է իբրեւ հայկական ապստամբութիւնների բռնկման պատճառ, որն իր հերթին յանգեցրել է

© National Library of Armenia

անցանկալի հետեւանքների: «Ապստամբութիւնն անհրաժեշտաբար կեանքի է կոչում բռնութիւն, իսկ իւրաքանչիւր բռնութիւն՝ առաջադիմութեան այս կամ այն չափով երկարատեւ կասեցում»,– հաւաստում է նա[121]*:*

Այսպիսին են Դէ Կուրսոնի կռուանները, որոնք հետագայ տասնամեակներում բազմիցս վկայակոչուելու են ոչ միայն Թուրք, այլեւ այլազգի՝ Հայոց ցեղասպանութիւնը ժխտող տարբեր հեղինակների կողմից: Ինչպէս տեսնում ենք, անկախ այն բանից, թէ որոնք են դրա շարժառիթները, նա խեղաթիւրում է փաստերը, ամբողջութեամբ շրջանցում 1878 թ. ի վեր մեծ տէրութիւնների դիւանագիտական շրջանակներին բազում անհանգստութիւններ պատճառած Հայկական հարցի գոյութիւնը, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան տարածքում բնակուող քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ՝ համիդեան վարչակարգի կիրառած հալածանքները, գործադրած բռնութիւնները եւ արեւմտահայութեան դէմ սանձազերծած ցեղասպանութեան գործընթացի իրողութիւնը:

Դէ Կուրսոնի ելակետային դրոյթների առիթով, նպատակայարմար ենք գտնում վկայակոչել նրա ֆրանսիացի ժամանակակիցներից մէկի՝ տիկին Հուդրի-Մենոսի հաւաստումը. «Սուլթանի խոստումները մնացին իբրեւ մեռեալ տառեր: Հայ երիտասարդութեան մի մասն այդժամ դիմեց ազգին՝ խնդրելով բողոքել եւ բարենորոգումների կենսագործման պահանջ ներկայացնել: Ազգային զարթօնք հրահրելու նպատակով ձեւաւորուեցին հայրենասիրական կոմիտէներ: Հենց այս իրողութիւնն են անուանել հայկական ապստամբութիւն եւ այն վերագրել անգլիական մեքենայութիւններին»[122]*: Ի դէպ, իմաստ ունի յիշատակել, իրադարձութիւնների ժամանակակից թուրք գործիչ Մուրադ բէյի վկայութիւնը եւս. «Երբ Թուրքիայում արտասանում էին «հաւատարիմ ազգ» բառերը, ամէնքը հասկանում էին, որ խօսքը վերաբերում է հայերին»*[123]*:*

Ջատագովական դիրքերից է գրուած նաեւ Է. Լո Ժոնի գրչին պատկանող Աբդուլ Համիդի կենսագրականը, որն ընդգրկում է սուլթանի գործունէութեան դրուագները մինչ հայկական կոտորածների սանձազերծումը[124]*:*

Եզրափակելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում մանրամասնել մի էական հանգամանք, այն է՝ մեր քննարկած ուսումնասիրութիւնները ֆրանսիացի պատմաբանները գրել են դեռեւս ոչ ամբողջական եւ լիարժէք տեղեկատուութեան հիման վրայ, որն իր դրոշմն է թողել նրանց շարադրանքում եւ վերլուծութիւններում: Այդ իսկ պատճառով, նրանք յաճախ սահմանափակուել են եղեռնի սոսկ ա՛յս կամ ա՛յն պատճառների վերլուծութեամբ, նոյնիսկ ի վիճակի չեն եղել դրանք քննարկել պատճառակցական կապի մէջ, յաճախ տեսադաշտից դուրս են թողել Հայոց ցեղասպանութեան գլխաւոր պատճառները (Հայկական հարցին լուծում տալու անհրաժեշտութիւն, բռնի թրքացման քաղաքականութեան ձախողում): Այդուհանդերձ, նրանցից մի մասին յաջողուել է մասամբ բացայայտել Հայոց ցեղասպանութեան որոշ պատճառներ, դիմազերծել կազմակերպիչներին եւ արեւմտահայութեան հանդէպ անկարեկից դիրքորոշման համար խարազանել մեծ տէրութիւնների ղեկավար շրջաններին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Այդ մասին տե՛ս **Վ. Պօղոսեան,** *Ֆրանսիական տպագիր սկզբնաղբիւրները 1894–1896 թթ. հայկական կոտորածների մասին.*– «Հայոց ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցեր», 2004, թիւ 9, էջ 100-121; նոյնի *Գուստաւ Մէյրիէն համիդեան կոտորածների մասին.*– Նոյն տեղում, էջ 152-159:

2 Այս ասպարէզում ֆրանսիական պատմագիտական մտքի վերլուծութեանը՝ միայն Ի. դարի 60-80-ական թուականների կտրուածքով անդրադարձել է Ռ. Գ. Սահակեանը: Տե՛ս Ռ. Սահակեան, *Հայկական ցեղասպանութեան պատմութիւնը ֆրանսիական հրատարակութիւններում,*- Ռ. Սահակեան, *Ցեղասպանութեան պատմութիւնից,* Երեւան, 1990, էջ 223-239, **Բ. Գ. Սաակյան,** *Вопросы новой истории Армении в трудах французских авторов.– Новая история Армении в трудах современных зарубежных авторов,* Ереван, 1993, с. 55-99.

3 Մենք կը շրջանցենք ֆրանսիացի մի շարք խոշոր պատմաբանների (Ա. Վանդալ, Ա. Լեռուա-Բոլիո եւ ուրիշներ), ինչպէս նաեւ քաղաքական, կրօնական գործիչների ու մտաւորականների եւ լոյսերը, որոնց քննութեանն անդրադարձել ենք մեր նախորդ յօդուածներում: Տե՛ս **Վ. Պօղոսեան,** *Համիդեան կոտորածները ֆրանսիական հասարակական մտքի գնահատմամբ (ԺԹ. դարավերջ – Ի. դարասկիզբ).*– «ՀԱ», 2001; նոյնի *Համիդեան կոտորածները ֆրանսիացի ժամանակակիցների հրապարակային դասախօսութիւններում.*– «ՊԲՀ», 2002, թիւ 2; նոյնի *Համիդեան կոտորածները եւ հայր Շարմետանը.*– «Էջմիածին», 2002, թիւ Դ; նոյնի *Համիդեան կոտորածները եւ աբբա Պիգանին.*– «Էջմիածին», 2003, թիւ Գ.-Դ; նոյնի *Համիդեան կոտորածները եւ Պիեռ Քիյեառը.*– «Էջմիածին», 2004, թիւ Դ:

4 **V. Bérard,** *La politique du sultan,* Paris, 1897. Բերարի գիրքը մանրամասնօրէն վերլուծել ենք մեր նախորդ յօդուածներից մէկում: Տե՛ս **Վ. Պօղոսեան,** *Համիդեան կոտորածները ֆրանսիական հասարակական մտքի գնահատմամբ,* էջ 441-447:

5 **L. de Contenson,** *Chrétiens et musulmans. Voyages et études,* Paris, 1901, p. XIII.

6 Նոյն տեղում, էջ 65:

7 Նոյն տեղում:

8 Նոյն տեղում, էջ 97:

9 Նոյն տեղում, էջ 61:

10 Նոյն տեղում, էջ 78:

11 Նոյն տեղում, էջ 66, 67:

12 Տե՛ս օրինակ՝ **P. Pisani,** *Les affaires d'Arménie,* Paris, 1895, 19; **E. Lamy,** *La France du Levant,* Paris, 1900, p. 84; **R. Pinon,** *L'Europe et l'empire Ottoman. Les aspects actuels de la question d'Orient,* Paris, 1908, p. 43. Տե՛ս նաեւ *Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897,* Paris, 1897, p. 2-7.

13 **L. de Contenson,** նշ. աշխ., էջ 152: Ի դէպ, այս հարցում նրա ֆրանսիացի ժամանակակիցներից Պ. Քիյեառի մօտեցումը, որը հայերի թուաքանակը սահմանում էր երեք միլիոնի շրջանում, աւելի իրատեսական է: Տե՛ս **P. Quillard,** *Pour l'Arménie. Mémoire et dossier,* Paris, 1902, p. 59. Այս առիթով հարկ է նշել, որ համաձայն Ա. Համբարեանի հաւաստի հաշուարկների եւս, 1860-1870-ական թթ. Օսմանեան կայսրութիւնում բնակւում էր շուրջ երեք միլիոն հայ, որից 2.5 միլիոնն Արեւմտեան Հայաստանում: Տե՛ս **Ա. Համբարեան,** *Ազգաբնակչութիւնը Արեւմտեան Հայաստանում (1856-1914),* Երեւան, 1965, էջ 45; նոյնի *Արեւմտահայերի թուաքանակի հարցի շուրջը.*– «ԲԵՀ», 1969, թիւ 2, էջ 110: Տե՛ս նաեւ **Պ. Ս. Սիմոնեան,** *Հայկական հարցը եւ ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թուականներին,* Երեւան, 2003, էջ 76:

14 **L. de Contenson,** նշ. աշխ., էջ 111-112:

15 Նոյն տեղում, էջ 69:

16 **R. Baridon,** *Arménie. Coup d'œil général et explicatif sur son histoire et les derniers événements,* Paris, 1896.

17 Նոյն տեղում, էջ 5:

18 Նոյն տեղում, էջ 6:

19 Նոյն տեղում, էջ 8:

20 Նոյն տեղում, էջ 4, 10:

21 Նոյն տեղում, էջ 14:

22 **G. Appia** , *Enfants arméniens. Souvenirs de Noël 1895. Récits autentiques,* Paris, 1896.

23 Նոյն տեղում, էջ 5:

24 Նոյն տեղում:

25 Նոյն տեղում, էջ 6:

26 Նոյն տեղում:

27 Նոյն տեղում, էջ 9:

28 **Mac Coll Malcolm,** *L'Arménie devant l'Europe.*– "Revue des revues", livraison du 1er septembre, 1895, p. 381-402; livraison du 15 septembre, 1895, p. 492-521. Նշենք նաեւ, որ երկու տարի անց Փարիզում այն վերահրատարակուել է. տե՛ս **Mac Coll Malcolm,** *L'Arménie devant l'Europe. Le gouvernement turc est une théocratie,* Paris, 1897.

29 **J. Finot,** *Un peuple de martyrs! (La question arménienne).*– "Revue des revues", livraison du 1er septembre 1895.

30 Նոյն տեղում, էջ 377:

31 Նոյն տեղում:

32 Նոյն տեղում, էջ 378:

33 Նոյն տեղում, էջ 377:

© National Library of Armenia

34 Նոյն տեղում:

35 Նոյն տեղում, էջ 378:

36 Նոյն տեղում. էջ 379:

37 Նոյն տեղում:

38 Նոյն տեղում: Նշենք նաեւ, որ «Ռեւիւ դէ ռեւիւ» հանդէսում Ֆինոն հրապարակել է Ա. Զօպանեանի կողմից հրատարակութեան պատրաստուած «Հայաստանի կոտորածները»՝ դեռեւս անտիպ ժողոուածուից մի նամակ՝ նուիրուած Ուրֆայի ջարդերին: Տե՛ս *Les massacres d'Edesse.* (Récit d'un témoin).– "Revue des revues", livraison du 15 juillet 1896, p. 153-160. Հմմտ. *Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau*, Paris, 1896, p. 239-258.

39 *Le maître et les serviteurs d'Yeldiz. (Dans l'intimité d'une Cour à la fin du XIXe siècle)).*– "Revue des revues", livraison du 15 août 1897, p. 304-310; livraison du 15 septembre 1897, p. 409-417.

40 Նոյն տեղում, էջ 415:

41 Նոյն տեղում, էջ 416:

42 Նոյն տեղում, էջ 417:

43 Նոյն տեղում:

44 Նոյն տեղում:

45 Տե՛ս օրինակ՝ **E. Driault,** *La politique orientale de Napoléon. Sébastiani et Gardane (1806-1808),* Paris, 1904; նոյնի *Napoléon et l'Europe*, Paris, 1912-1917, t. 1-5.

46 **E. Driault,** *La question d'Orient depuis ses origines jusqu'à nos jours*, Paris, 1898.

47 Նոյն տեղում, էջ 252:

48 Նոյն տեղում, էջ 255:

49 Նոյն տեղում, էջ 252:

50 Նոյն տեղում, էջ 258:

51 Նոյն տեղում, էջ 258-259:

52 Նոյն տեղում, էջ 258:

53 **E. Lavisse,** *Questions.*– "Revue de Paris", livraison du 15 janvier 1897, p. 459-460.

54 Նոյն տեղում, էջ 460-461:

55 **E. Lavisse,** *Notre politique orientale.*– "Revue de Paris", livraison du 15 mai 1897, p. 282.

56 **E. Lavisse,** *Questions*, p. 463.

57 **E. Lavisse,** *La paix d'Orient.*– "Revue de Paris", livraison du 15 février 1898, p. 865.

58 **E. Lavisse,** *Notre politique orientale*, p. 297.

59 Նոյն տեղում, էջ 294-295:

60 Նոյն տեղում, էջ 302:

61 **E. Lavisse,** *Note sur le Livre Jaune.*– "Revue de Paris", livraison du 15 mars 1897, p. 443-451.

62 Նոյն տեղում, էջ 455: Տե՛ս նաեւ **Lavisse E.,** Questions, p. 463.

63 **E. Lavisse,** *Note sur le Livre Jaune*, p. 454.

64 **E. Lamy,** նշ. աշխ.: Մասնակի կրճատումներով այն առաջին անգամ լոյս է ընծայուել 1898-1899 թթ. «Ռեւիւ դը Պարի» ամսագրում: Տե՛ս "Revue de Paris", livraison du 15 novembre; livraison du 15 décembre 1898; livraison du 15 janvier; livraison du 1er mars; livraison du 15 avril; livraison du 16 septembre 1899.

65 Նոյն տեղում, էջ 74:

66 Նոյն տեղում, էջ 85-86:

67 Նոյն տեղում, էջ 86:

68 Նոյն տեղում, էջ 91-92:

69 Նոյն տեղում, էջ 84: Այս հարցի մասին տե՛ս վերը:

70 **Ch. Seignobos,** *Histoire politique de l'Europe contemporaine. évolution des parties et des formes politiques 1814-1896,* Paris, 1897, p. 605.

71 **G. Becker,** *La guerre contemporaine dans les Balkans et la question d'Orient (1885-1897),* Paris, 1899.

72 **R. Pinon,** նշ. աշխ., էջ 42:

73 Նոյն տեղում, էջ 53:

74 Նոյն տեղում, էջ 50:

75 **M. Choublier,** *La question d'Orient depuis le traité de Berlin. Etude d'histoire dipolmatique,* Paris, 1897.

76 Նոյն տեղում, էջ 390:

77 Նոյն տեղում, էջ 386:

78 Նոյն տեղում, էջ 391:

79 Նոյն տեղում, էջ 397:

80 Նոյն տեղում, էջ 400:

81 Նոյն տեղում, էջ 406:

82 Նոյն տեղում, էջ 419-420:

83 **P. de Régla,** *Au pays de l'espionage. Les sultans Mourad V et Abdul-Hamid II,* Paris, 1902, p. 129.

84 **G. Dorys,** *Abdul-Hamid intime,* Paris, 1901; 2.me éd. 1903 (մենք կը յղենք գրքի երկրորդ հրատարակութիւնը): Ըստ «Պրո Արմենիայի» հաղորդագրութիւններից մէկի, Դորիս կեղծանունով հանդէս է եկել ֆրանսիացի լրագրող Ա. Ադոսիդեսը: Տե՛ս *A propos "d'Abd-ul-Hamid intime".*– "Pro Armenia", 25 avril 1901. Այդ մասին տե՛ս նաեւ «Անահիտ», Գ տարի, 1901, թիւ 1, էջ 3: Նշենք նաեւ, որ այս գրքից որոշ հատուածներ թարգմանաբար տպագրուել են «Անահիտում»: Տե՛ս «Անահիտ», Գ տարի, 1901, թիւ 1, էջ 3-7; թիւ 3, էջ 63-67; թիւ 4-5, էջ 109-111:

85 **G. Dorys** , նշ. աշխ., էջ 63:

86 Նոյն տեղում, էջ 73:

87 Նոյն տեղում, էջ 73, 98:

88 Նոյն տեղում. էջ 271:

89 **P. Frémont,** *Abdul-Hamid et son règne. Par un ancien fonctionnaire ottoman*, Paris, 1895.

90 Նոյն տեղում. էջ 98-100:

91 Նոյն տեղում. էջ 45:

92 Տե՛ս օրինակ **Ս. Սապահ-Գիւլեան,** *Պատասխանատուները*. Պրովիդենս. 1916. էջ 153-154:

93 **En Orient.**– *"Revue de Paris"*, livraison du 1er décembre 1895.

94 Տե՛ս Պ. Քիյեառի անթուակիր նամակը Ա. Զոպանեանին՝ Ե. Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան, ֆ. Ա. Զոպանեանի, բաժին III, վաւ. 9465; տե՛ս նաեւ **V. Bérard,** նշ. աշխ., էջ 286:

95 **En Orient**, p. 451-452.

96 Նոյն տեղում, էջ 453:

97 Նոյն տեղում:

98 Նոյն տեղում:

99 Նոյն տեղում, էջ 455:

100 Նոյն տեղում, էջ 456:

101 Նոյն տեղում, էջ 458:

102 Նոյն տեղում, էջ 458-459:

103 Նոյն տեղում, էջ 460-461:

104 Նոյն տեղում, էջ 458-459:

105 **P. Quillard & L. Margery,** *La question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux*, Paris, 1897, p. 32:

106 **V. Bérard** , նշ. աշխ., էջ 286: Նշենք նաեւ, որ Հանոտոյի ջանադրութիւնը բարձր է գնահատուել Բարձր Դռան կողմից, որը նրան պարգեւատրել է սուլթանին մեծ ծառայութիւններ մատուցած անձանց շնորհուող՝ Իմթիյազի շքանշանով: Այդ մասին տե՛ս **P. Quillard & L. Margery,** նշ. աշխ. էջ 32:

107 **G. Hanotaux,** *La politique de l'équilibre: 1907-1911,* Paris, 1912; *նոյնի՝ La guerre des Balkans et l'Europe: 1912-1913,* Paris, 1914; *նոյնի՝ Histoire illustrée de la guerre de 1915*, Paris, 1915-1926, t. 1-17.

108 **G. Hanotaux,** *Histoire de la France contemporaine (1871-1900)*, Paris, 1908, t. 4.

109 **P. B. Allauch,** *La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire,* Paris, 1895, p. 6.

110 Նոյն տեղում, էջ 24, 38, 43:

111 Նոյն տեղում, էջ 32:

112 Նոյն տեղում:

113 Նոյն տեղում. էջ 33:

114 **D. Cochin,** *Contre les barbares*, Paris, 1899, p. 58.

115 **P. B. Allauch,** նշ. աշխ. էջ 43:

116 **R. Des Coursons,** *La rébellion arménienne. Son origine-son but,* Paris, 1895.

117 Նոյն տեղում. էջ 26:

118 Նոյն տեղում. էջ 32: Այդ մասին տե՛ս վերը:

119 Նոյն տեղում, էջ 36:

120 Նոյն տեղում. էջ 92, 36:

121 Նոյն տեղում, էջ 12:

122 **M[adame] Hudry-Menos,** *Les massacres en Arménie,* Paris, 1896, p. 5.

123 **Mourad bey,** *Le Palais de Yildiz et la Sublime Porte. Le véritable mal d'Orient*, Paris, 1895, p. 16.

124 **E. Le Jeune,** *Comment on sauve un empire. S. M. I. le Sultan Ghazi Abdul Hamid Khan II et son œuvre*, 2ème éd., Paris, 1895

© National Library of Armenia